

ԾՕՎԱՌ



Ձ. Տարի, Թիւ 1, Յունուար 1, 1932

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻԿ ԶՆԳՇՈՅ ԾՕՎԱՌ ԸՆԹԵՐՑ. ԸՆԿ.-ԵԱՆ
Հրատարակելի Գրութիւններ Ղրկել 852 N. Hoyne Ave., Chicago, Ill.

ՇՆՈՐՀԱԽՈՐ ԾՆՈՒՆԴ ԵՒ

ԲԱՐԻ ԿԱՂԱՆԴ

«ԾՕՎԱՌ»Ի ԲՈՂՈՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

ԱՐԻԱՐԻՆՆ Է ՅԱՂԹԱՆԱԿԸ

Սա անցնող տարին դատանքի եւ վերիվայրումներու տարի մը եղաւ Չնգուշի Վերաշինաց Միութեան համար:

Դատավարութիւնը, որ այնքան շունչի ու կորովի սպառման պատճառ եղաւ ու կ'ըլլայ տարիներէ ի վեր, տակաւին կը քաշկոտուի դատարաններու մէջ եւ ի զուր օրէ օր վերջնական վճիռի մը վրայ սպասենք:

Այս մղձաւանջը բաւական չէր, եւ ահա այս տարի աւելի եւս բորբոքեցան կիրքերը: Եսասիրական ու քինախնդրական զգացումները դուրս պոստիկացին ժահրոտ հոգիներէ եւ պահ մը սպառնալիք մը դարձան նոյն խաղ Միութեան գոյութեան: Հին կամակոր ու անոպայ անձնաւորութեանց միացան նոյնքան կամայական ու յիմարական մոլուցքէ մը մղուած սմանդուկ մարդիկ, գաճաճներ՝ որոնք ինքզինքնին հսկաներ կարծելով յանդգնեցան գլուխ վերցնել Միութեան ու անոր օգտին համար թրաշանօրէն աշխատող վճռակամ ու անշահախնդիր տարրերու դէմ:

Այս նորեկները աւելի վատ դտնուեցան քան իրենց նախորդները, զիմեցին խարդաւանանքի, սուտի, բանասարկութեան եւ ամէն տեսակ զղուելի արարքներու: Անոնք ուղեցին իրենց ետին գոհել Միութեան շահերը, քանզի Վերաշինացը, եւ աւաղուրկ բուերու պէս անոր աւերակներուն վրայ

նստած իրենց զահանդեցնող քրքիջը բարձրացնել եւ երեմիականը վայել:

Միութիւնը, սակայն, կորովի ու ջղուտ ինքն իր մէջ, ետ մղեց բոլոր յարձակումները, խիզախ պայքար մղեց այս անուր չարաշահութեանց դէմ, ինքնամփոփուեցաւ եւ մարտնչումի կուռ ճակատ պարզելով յօգս ցնդեցուց դաւադրական խաղերը եւ Միութիւնը դրաւ աւելի ամուր կռուանի մը վրայ:

Հին եւ դեռ իր լուծումը չգտած դատավարութեան յետոյ, նոր դատ մըն ալ կը սկսի Միութեան վերին մարմնոյն՝ Կեդր. Վարչութեան դէմ: Մէկ քանի «կէս» ու «քառորդ» մարդիկ իրար եկած «Կեդր. Վարչութիւն» կազմած են եւ կ'աշխատին ինքզինքնին պարտադրել բոլոր մասնաճիւղերու եւ հայրենակիցներու:

Մեզի համար աներեւակայելի է այսքան ցնորական աքթ եւ անպատասխանատուութեան ցուցադրութիւն, որ մտքի եւ հոգիի սնանկութեան յայտարար նշաններ են:

Բայց այս պարոնները իրենց ամբողջ խելագարութիւններուն մէջ մէկ բան նկատի առած չեն, եւ այդ այն Լաբալիսեան ճշմարտութիւնն է, թէ վերջնական յաղթանակը արդարութեան եւ ճշմարտութեան կողմն է, եւ արդարութիւնն ու ճշմարտութիւնը Միութեան շահերուն ի խնդիր պայքարող մեծամասնութեան դաշնակիցն է:

Չնգուշի Վերջ. Միութեան բոլոր մասնաճիւղերը եւ բանիմաց ու արդարակորով հայրենակիցները ներկայ Կեդր. Վարչութեան կողքին կանգնած են միասին տանելու պայքարը, հոգ չէ թէ տտիկա նոր զոհողութիւններ եւ ծանր աշխատանքներ պահանջէ:

Թող վախնան ու դողան անոնք՝ որ արդարութիւնն ու ճշմարտութիւնը հակառակորդ ունին իրենց դէմ, որովհետեւ իրենց կը սպասէ ստոյգ պարտութիւնը:

Մենք վստահ ենք ասոր:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Ֆարգելի հայրենակիցներ,

Ինչպէս մեր Դ. շրջաբերականով ըսած էինք, Կեդրոնական վարչութիւնը յարմար նկատեց «Ծովառ»ի այս բացառիկ թիւով հրատարակել վերաշինացի անցուդարձերը, անոր ցաւերը եւ ջանալ դարման մը գտնելով վերակենդանացնել զայն:

Ուրախ ենք որ «Ծովառ»ի վարչութիւնը ընդունեց մեր առաջարկը եւ ամենայն սիրով տրամադրեց մեզի այս բացառիկ թիւին հրատարակութիւնը:

Կեդրոնական վարչութիւնը բոլոր Զնգուշցի հայրենակիցներուն կողմէ իր շնորհակալութիւնը կը յայտնէ «Ծովառ»ի վարչութեան եւ խմբագրութեան, իրենց այս անգին ծառայութեան համար, որ կը յուսմանք թէ պիտի լուսարանէ ամէն ինչ եւ գորացնէ վերաշինացի դիրքը:

Ի դիմաց Զնգուշի վերջ. Միութեան Կեդր. վարչութեան
Ատենադպիր Ատենապետուհի
ԱՒԵՏԻՍ ՓԱՊՈՒՃԵԱՆ ՎԱՐԴԱՆՈՒՇ ՓԱՊՈՒՃԵԱՆ

ԶՆԳՈՒՇԻ ՎԵՐԱՇԻՆԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԵՐՎԱՅ ՎԻՃԱԿԸ

Հայրենակիցներ, ցաւալի է ընդունիլ որ վերաշինացի գործը մեծապէս աղղուեցաւ Շիքակոյի հանրածանօթ դատավարութենէն:

Կեդրոնական վարչութիւնը մամուլով, նամակներով, չրջաբերականներով եւ այլ միջոցներով շատ անգամներ մանրամասն տեղեկութիւններ հաղորդած է մասնաճիւղերուն, սակայն կան տակաւին հարկւրաւոր հայրենակիցներ, որոնք զազաւար չունին թէ ի՞նչ է բուն պատճառը այս դատավարութեան եւ որո՞նք են պատասխանատուները:

Մի քանի ամիսներ առաջ Շիքակոյի մէջ խմբագրուած կարգ մը դրութիւններ հրատարակուեցան «Կոռնիկ»ի եւ «Ե. Հայաստան»ի մէջ, որոնք բոլորն ալ իրենց ժահրը կը թափէին Կեդրոնական վարչութեան մի քանի անհատներուն վրայ: Այս՝ դրութիւններէն մին ստորագրուած էր մօտաւորապէս 50 Զնգուշցիներէ:

Շիքակոյի մեր հաւատարմիմ եւ դործօն անդամները քննեցին խնդիրը, հասկնալու համար թէ իրա՞ն յիսուն Զնգուշցիներ կը բողոքէին Կեդրոնի գործունէութեան չուրջ. որոնք էին այդ անհատները: Այդ յիսունէն երեքը միայն հաւատարմիմ են իրենց ստորագրութեան, ասոնք են՝ Պ. Գէորգեան, Մ. Էրմոյեան եւ Յ. Գառնիկեան: Մնացեալները ամէնքն ալ սուտ ու խարդախուած ստորագրութիւններ եղած են: Ի՞նչ արժէք ունի այնպիսի անհատի մը բողոքը, որ նիւթական եւ ոչ մէկ աշակցութիւն ընծայած է վերաշինացին, այն մէկը որ տարիներով ժողովներու երես տեսած է: Իրապէս ցաւալի է որ մեր հայրենակիցները առանց նկատելու իրենց դիրքը, առանց կարգալու իրենց առջեւ դրուած դրութիւնները, առանց հետապնդելու եւ հասկնալու խնդրոյն էութիւնը, անմիջապէս կը ստորագրեն իրենց ներկայացուած թուղթերուն տակ:

Ասանկ պարագաներ պատահեցան Լօրէնսի մէջ: Ս. Յակոբեան իրրեւ թէ պատգ. ժողով կը գումարէ, ինքզինքը ատենապետ կը հռչակէ, Պրն. Ոսկերիչեան ատենադպիր, եւ Պրն. Գ. Եղմուրեան գանձապահ: Ի՞նչ ծիծաղելի երեւոյթ: Պրն. Եղմուրեան չընդունիլ իր բացակայութեան իրեն յանձնուած պաշտօնը, բողոքագիր կը զրկէ աստ անդ. Ս. Յակոբեան գիտէ ասիկա եւ տակաւին կը յամառի իր ըրածներուն վրայ:

Մեղք իմացեան ուրիշ բողոքագիր մը կը պատրաստէ նստարանաւոր խանութին թուղթէ տոպրակներէն մէկը վրայ, որ միայն ինք կրնայ կարգալ, եւ օր մը վէճերը լեւոտ փաթէի մէջ մեր հայրենակիցներէն ոմանց չափազանիս նախաձեռն միջոցին զանոնք կը ստիպէ որ ստորագրեն, եւ որոնք են ստորագրողները: Երկուքը մասնաճիւղերէն մէկը արեւմտեան, միւսները — Նիդամեան եւ Գոռնուեան. որոնք օր մը օրանց ժողովի երես տեսած չեն եւ ոչ ալ մէկն ինքնուրած են վերաշինացին: Ասոնցմէ միայն մէկը՝ Պրն. Ալեքսանդրեան, մի քանի օր վերջ երբ կը տեսնէ թէ ստորագրած դրութիւնը բոլորովին տարբեր էր քան այն չրջաբերութեան դրուած էր, կը բողոքէ Մեղքին դէմ: Նիդամեան մասնաճիւղին ժողովներէն մէկուն մէջ կ'ընդունի չափալը, եւ կը ստորագրէ կարծ հերքման պիւր մը, որ ժամանակին լոյս տեսաւ «Պայքար»ի եւ «Ծովառ»ի մէջ:

Ահա հայրենակիցներ այս քանի մը վնասուածները, իրենց ետին հաւաքած մի քանի անպատասխանատու հայրենակիցներ, կը ջանան մեր աչնիւ եւ հայրենասէր աղղալիներու մտքերը պղտորել եւ վիժեցնել վերաշինացի վեհ պատալը:

Ալ հերի՛ք է համբերենք, համբերութիւնն ալ իր ամանը ունի: Դուրս վնասուածները թող դուրս մնան. անոնք մեռած ճանճերու պէս են, որ քանի իւզագործին իւզըն մը կը մնան, այնչափ ատեն այդ իւզը կ'ապականեն:

Զենք կրնար հասկնալ, մեր կարողութենէն վեր է ըմբռնել թէ այս կարգ մը խելագարները ի՞նչ համարձակութեամբ Կեդրոնի անդամներուն դէմ դատ կը բանան: Իրենց գրած բողոքագիրը նմանապէս կը նմանի նստարանաւոր թուղթէ տոպրակի մը վրայ դրուածին, սուտ եւ անհիմն խաւերու կոյտ մը, արդեօք Ամերիկայի դատարանները մեր ժողովներո՞ւն կը նմանցնեն, ուր ինչ որ ուղեն կրնայ խօսիլ եւ ներկայացնել: Ո՛րչափ յանդգնութիւն: Այս մարդիկը արդեօք հեռատեսութեան նշո՞յն իսկ չունին իրենց մէջ, հասկնալու թէ իրենք մեղի դէմ կոռուելու ունէ կոռուելու չունին:

Ասոնք ալ կ'անցնին. ոչ թէ Կեդր. վարչութիւնն է որ պիտի կռուի այս մի քանի սինըրոներուն դէմ, այլ բոլոր վերաշինացի անդամները, ինչպէս պիտի տեսնենք «Ծովառ» այս թիւին մէջ:

Վերաշինացը այսօր շատ աւելի յաջող դիրքի մը վրայ կը գտնուի, ան մաքրագործուած է ներքին ցեցերէ, արդէ վիճակի մէջ է:

Կարգացէք Լօրէնսի մէջ կաղմուած Հաշտարար Յանգիսի տեղեկագրութիւնը եւ կրնաք ձեր զազաւարը քննել մեկ:

Կրնա՞ք ունէ դիտողութիւն ընել այս պատուական հայրենակիցներու — Հաճի Աւետիս Էղմանեանի, Պրն. Կարգապետ Էօքսուղեանի, Ասլան Կէօքճեանի եւ Գասպար Եղմուրեանի — մանրագնին քննութեան եւ հանած եղբայրացութեան մասին:

Ալ ատեն է որ ճանչնանք մեր թշնամիները եւ կոռուներն, եթէ կ'ուղենք հասնիլ մեր որդեգրած նպատակին:

Կարգացէք մասնաճիւղերէ եկած բողոքագիրները վստահ ենք թէ պիտի համոզուիք մեր ըսածներուն:

Կարգացէք մեր կողմէն Մեղքին ուղղուած նամակները դատավարութենէ չենք վախնար եւ ոչ ալ խուսափելու առիթ կ'ուղենք ընծայել, մեր նպատակը սոսկ վերաշինութիւնը փրկելն է:

Պէջըութի մեր մասնաճիւղը 25 տուարի չնչին դուստար մը կը խնդրէ մեզմէ, մեր հայրենակիցներու հինգ զաւակները դպրոց ղրկելու եւ ուսում տալու համար անոնց: Մտիպուած ենք մերթեւ. ինչո՞ւ. որովհետեւ դանձին դրամը փաստարաններու եւ դատարաններու մէջ մտնելու ստիպուած ենք սա մի քանի յամառ, կամակոր եւ եսամոլ տգէտներու երեսէն:

Արդեօք քանի՞ տարի է որ մեր զործօն անդամները իրենց թանկագին ժամերը ի սպաս դրած են մեր անողանջուն թափած որոմը մաքրելու համար միայն, քանի՞ հարիւրաւոր տղարներ վատնուած են Շիքակոյէի, Նիւ Եորքի եւ Լօրէնսի մէջ այս ազդեցիկներու երեսէն: Քանի՞ հայրենակիցներ զըղուելով՝ հեռացած են վերաշինացի շարքերէն՝ սոսկ այս կոխներուն պատճառաւ:

Ահաւասիկ թնճուկ մը որ մաքրել անկարելի կը թուի: Խորհրդային Հայաստան պատահութիւն կուտայ արտասահմանի Հայերուն հայրենիք մեկնելու. Բարեգործականը մի քանի նամակներով մեզմէ մեր հայրենակիցներու անունները կը խնդրէ, ահաւասիկ մեր տարիներէ ի վեր երազած պատահութիւնը կը ներկայանայ մեզի. կրնա՞նք ընդ առաջ երթալ եւ օգտուիլ այս պատահութենէն, ոչ. ինչո՞ւ: Որովհետեւ Կեդր. Վարչութիւնը ստիպուած է հարիւրաւոր նամակներ, գրութիւններ, կանոնադրներ անգլիերէնի թարգմանել, նոր դատաւարութեան մը պատրաստուելու համար: Շիքակոյէ քիչ էր կարծես: Կեդր. Վարչութիւնը ստիպուած է հինգ վեց հարիւր տուար եւս ծախսել այս թնճուկն ալ պատուաւոր կերպով մաքրելու համար, իսկ անդին, Սիւրիոյ եւ Փրանսայի մեր պատուական հայրենակիցները ստիպուած պիտի սպասեն դեռ: Ս. Յակոբեան եւ Մելիք Ինկիլիդեան այսպէս կ'ուզեն...:

Ասկէ երեք ամիս առաջ, երբ մեր շրջաբերականով մատնանչեցինք թէ այս տղաքները կուսակցական նեղ հոգիով ամէն դժուարութիւն կ'ուզեն յարուցանել վերաշինացի դէմ, կարծես քրէական յանցանք մը զործած եղանք ոմանց համար: Ո՞վ եղած են սակայն այս անհամար նեղութիւններուն տուն տուողները, եթէ ոչ մի քանի տղէտ, նեղմիտ, եսամոլ Սօց. Դէմոկրատ Հնչակեաններ: Յոյց տուէք ասոնցմէ զատ Չնգուլցի մը եւ մենք կուտանք մեր պատասխանը:

Հայրենակիցներ, վերաշինացի բոլոր մասնաճիւղերը ողի ի բռին թիկունք կը կենան Կեդր. Վարչութեան: Կեդրոնը քաջալերուած իրեն հասած անհամար նամակներէն, պատրաստ է մաքառելու ամէն անոնց դէմ որ կը յանդգնին վերաշինացի յառաջացման արգելք հանդիսանալ:

Ինկիլիզի մը տղան Մելիքը եւ կամ Հըշտըդուլ Էկոբին տղան Սարգիսը մեզ չեն կրնար վախցնել եւ կասեցնել մեզ մեր ընթացքին մէջ:

Վերաշինացի դործը վեհ է, անոր հետեւողները իրական Չնգուլցիներ են, որոնք ուխտած են ամէն գնով վերականգնել Նոր Չնգուլը: Վա՛յ անոնց որ արգելքներ հանել կը փորձեն անոր առջեւ:

Չնգուլցի վերջ. Միութեան Կեդր. Վարչութիւն
Վ. ՓԱՊՈՒՅԵԱՆ Ա. ՓԱՊՈՒՅԵԱՆ
Պ. ՍՏԵՓԱՆԵԱՆ Կ. ԹՈՒԽՄԱՆԵԱՆ
ՍԻՄՈՆ ՊԱՊԵԱՆ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

«Ծօղառ»ի 1931ի հաշուեկշիռը պիտի տանք յաջորդ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԶՆԳՈՒՇԻ ՎԵՐՇ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ 1930-1931-Ի ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿԸ

ՔՆՆՈՒԱԾ ՏՐԴ. ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ ՍԵՊՏ. 6, 1931
ԵՒ ՎԱԻԵՐԱՑՈՒԱԾ ՀԱՇՈՒԵՔՆԵՒԶ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ

Մուտք

Նախորդ դանձին մնացած	\$793.38
Գալիֆօրնիայէն ղրկուած	817.94
Նիւ Եորքէն ղրկուած	163.00
Շիքակոյէն ղրկուած	110.00
Լօրէնսէն ղրկուած	450.00
Եունիքն Սիթիէն ղրկուած	37.17
Ֆիլատէլֆիայէն	15.00
Նուէրներ անհատներէ	19.00

Ընդհանուր դուստար՝ 2405.49

Ելք

Դիւանական ծախք	\$68.72
Բացառիկ (ճաշասեղան, եւայլն)	20.75
Ճանապարհածախս	30.00
Հ. Բ. Ը. Միութեան	1,800.00
Կարօտեալներու	197.00

Ընդհանուր ելք 2116.47
Մուտք 2405.49

Դանձին մէջ կը մնայ \$289.02

Այս հաշիւը վաւերացուած է պատգամաւորական ժողովին կողմէ նշանակուած Հաշուեքննիչ Յանձնախումբին կողմէ, որուն անդամներն էին Տիարք Պ. Փապուճեան, Մլքսէթ Գրիգորեան եւ Աւետիս Թուրոյեան:

Ի դիմաց Չնգուլցի վերջ. Միութեան Կեդր. Վարչութեան Ատենապետուի՝ ՎԱՐԴԱՆՈՒՇ ՓԱՊՈՒՅԵԱՆ
Ատենապետի՝ ԱԻԵՏԻՍ ՓԱՊՈՒՅԵԱՆ
Գանձապետ՝ ՊԵՏՐՈՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆԷՆ

Պատուարժան Կեդր. Վարչութիւն
Չնգուլցի վերաշինաց Միութեան
Աստ

Յարգելի Տիարք,
Կը հաստատենք մեր Հոկտ. 14 թուականաւ նամակը, որուն մէջ ներփակ ձեզ ղրկած էինք, Փարիզէն ձեր նամակին ղրկուած պատասխանը:

Նոյ. 6, 1931

Փարիզէն այսօր ստացուած Հոկտ. 21 թուակիւր նամակի մը հետեւեալ տեղեկութիւնը նոյնութեամբ կը հաղորդենք ձեզ:

«Հաճոյքն ունիմ՝ ձեզ հաղորդելու թէ Նոյապարաչէնի Շիւնութեան Յանձնաժողովը ճշգրտչած է Նոր Չնգուլ թաղամասը, կեդրոնական վրասպարակին վրայ իսկ, թիւ 1 նշանակուած ներփակ յատակագիծին վրայ: Կը խնդրեմ ըստ այնմ պեկուցանել իրենց: Դալով Չնգուլցիներու փոխադրութեան, առ այժմ ի վիճակի չենք ճշդելու հաւանական թուականը. պէտք է շինութիւնները լրանան եւ կառավարութիւնը իր հաւանութիւնը տայ՝ նախ եւ առաջ»:

Հաճեցէք ներփակ գտնել Փարիզէն ձեզի համար ղրկուած



ՆՈՒՊԱՐԱՇԷՆԻ ՅԱՏԱԿԱԳԻԾԸ

Ինչպես կը տեսնուի, Նուպարաշէնի վերջնական յատակագիծը պատրաստուած է, ուր այժմէն նշանակուած է Զընգուշ քաղի վայրը, հրապարակին ճիշտ իմը, գեղեցիկ եւ նպատակայարմար: Մեզի կը մնայ փութով իրականութիւն դարձնել զայն եւ հոն տեղաւորել մեր հայրենակիցները:

Յատակադիծը, որուն վրայ նշանակուած է Նոր Զեղուչի տեղը:

Կը յուսամք նկատի կ'ունենաք ձեր հայրենակիցներու
դանկերուն մասին նախապէս եղած թերադրութիւնները :

Մնամ ձերդ յարդանօք

ԳՐ . Հ . ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

* * *

Պատուարժան Կեդրոնական Վարչութիւն

Ջնգուչի Վերաչինաց Միութեան

ආර්ථික භූමිකාව

Յարգելի Տիարք ,

Միութեանն Նիւ Եորքի Շրջանային Յանձնաժողովը մեզի փոխանցած է ձեր 23 Սեպտեմբեր ամսաթիւ նամակը՝ որով կարգ մը տեղեկութիւններ կը փափաքիք ունենալ ներդադթի եւ Նուպարաչէնի մասին :

Ինչպէս գիտէք, չինութիւնները յառաջ կը տարուին, բայց չենք կարծեր որ շտապիկայ ամառէն առաջ կարելի եւ նպատակաշարժար ըլլայ գաղթականներ փոխադրել. մնաց որ բնական է թէ ձեր յանձն առած գումարին ամբողջական վրձարումովր միայն կրնանք կառուցանել թաղամասը:

Զրիակերութիւնը ինքնին նուաստացուցիչ ըլլալով, եւ Երեւանի կառավարութիւնը եւս չուզելով որ ձրիակերներէ քաջալերուին, որոշուած է որ գաղթականները, երբ հետըզհետէ ի վիճակի ըլլան, մաս առ մաս կառավարութեան հատուցանեն շէնքին եւլն՝ փոխարժէքը, որպէս զի սեփականատէր դառնան եւ գանձուած գումարներով հնարաւոր ըլլայ նուազարաջներ շէնցնել եւ նորանոր շէնքերու կառուցումով ուրիշ գաղթականներ եւս հոն հաստատել: Այլապէս, նորա-

Հաստատողա զաղթականները վարձք պիտի չվճարեն, եւ 3 տարի զերծ պիտի ըլլան երկրադործական եւ կաշուածային ամէն տեսակ տուրքերէ եւ հարկերէ:

Գալով զաղթականներու փոխադրութեան ծախքին, ըստ սովորութեան պիտի բաժնենք կէս առ կէս: Բայց եթէ ձեր հայրենակիցներէն ոմանք ուղեն ներկայ ընդհանուր ներգաղթի պայմաններէն օգտուելով Հայաստան փոխադրուիլ, առժամապէս Նուպարաչէն Հաստատութեալու յանձնառութեամբ, հաւանօրէն ծախքի խնդիրը կը ղիւրանայ կամ գէթ իր նուազագոյն սակին կը վերածուի:

Հայաստանէն կը սպասենք նորագոյն տեղեկութեանց եւ սիրալոյսով պիտի հաղորդենք ձեզի Զնդուչ Թաղամասի վայրը ցոյց տուող յատակագիծը, անմիջապէս որ մեզի դիմուի:

Կեղը. Վարչ. Ժողովը խորապէս գնահատած ըլլալով Չնդուշի Վերաշինաց Միութեան համերաշխասէր շէնքերը, որ քաջալերեց Հայրենակցականներու համագործակցական ձգտումները, կրնանք ձեռք հաւաստիացնել որ կարելին պիտի չխնայէ ձեզի դոհացում տալու եւ ձեր հայրենակիցներուն բարօրութիւնը ապահովելու համար:

Խորին յարգանքով

ՎԱՐԻԶ-ՊԱՏՈՒԻՐԱԿ

ԲՈԼՈՐ ԶՆԳՈՒՇՑԻՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Մօտաւորապէս չորս տարիներ առաջ Զնդուշի վերալինաց Միութեան Շիջակոյի հակառակորդ հատուածը մերժան էր Միութեան նիւ ետքի կեդրոնական վարչութեան յանձնել երեք հազար տուար դումար մը, հիմնուած կարգ մը պատրուակներու վրայ: Երբ այդ հատուածին մի քանի անդամները ջանացած էին յիշեալ դումարը քաշել դրամատունէն, կեդրոնական վարչութիւնը մասնաճիւղերու հրահանգով անմիջապէս օրինական քայլի դիմած, դրամը կապան եւ դատի սկսած էր:

Չանադան առիթներով երեւան եկեր էին անհատներ, որոնք ջանացեր էին հաշտեցնել երկու կողմերը : Հաշտութեան ձեռնարկ մը եղաւ նաեւ անդեալ ամսուն :

Լօրէնսի մէջ կազմուեցաւ Հաշտարար մարմին մը, չորս
անդամներէ բաղկացեալ, որոնք էին փաստաբան Կարապետ
Էօքսիւղեան, Հաճի Աւետիս Էղմանեան, Ասլան Կէօքճաեան
և Գառնար Եղգմուրեան :

Կարգ մը խորհրդակցութիւններէ վերջ, հաշտարար մարմնի անդամներէն Պրնք. Ա. Կէօքճաեան եւ Կ. Խօթսիւզեան լիովթացին Նիւ Եորք, տեսնուելու Կեդրոնական վարչութեան հետ, եւ գտնելու հաշտութեան ելլր մը, եթէ հրաբաւոր էր :

Այս ատեն հաշտարար մարմինը իր ձեռքին մէջ ունէր նամակ մը դրուած Շիրքալոյի բողոքող հատուածին կողմէ, որով կը յայտնուէր թէ դրամը պիտի յանձնէին Լօրէնսի մէջ կազմուած հաշտարար մարմնին, եթէ Նիւ Նորքի Կեդրոնական Վարչութիւնը ինքզինքը հրաժարած յայտարարէր, հրաշարաւորութիւն տալով որ Կեդրոնական Վարչութիւնը մը կազմուէր Լօրէնսի մէջ:

Նոյն նամակին մէջ կը պահանջուէր նաեւ որ կեդրոնա-
կան Վարչութիւնը յճարէր իրենց բոլոր դատական ծախ-
սերը, եւ երեք հազար տոլարն ալ առ նուազն 6—12 ամիսէն
ծախսուէր Միութեան նպատակներուն համար :

Նիւ Եորքէ վերադարձին հաշտարար մարմինը հա-
ժարար հեռազրեց Շիքակոյի ընդդէմադիրներուն որ զրա՞մ
յանձնեն Կեդրոնական Վարչութեան ներկայացուցչին, եւ
ես քաջուին դատէն, որպէս զի հաշտարար մարմինը ես

իրականացում տայ իրենց պահանջներուն: Շիքակոյի ընդ-
դիմադիրները մերժեցին այս առաջարկը:

Հեռագրին տակ ստորագրեց նաեւ տեղւոյ մէջ գոյու-
թին ունեցող երեւակայական «Կեդրոն»ի ատենապետ Ս.
Յակոբեան: Հոս կարեւոր կը նկատենք յիշելու որ երբ Ս.
Յակոբեան կը ստորագրէր Հաշտարար մարմնի ղրկելիք հե-
ռագրին ներքեւ, կը յայտարարէր թէ ասով վերջացած
կըլլայ Լօրէնսի մէջ կազմուած ենթադրեալ Կեդր. Վարչու-
թիւնը, ինչպէս նաեւ այսպէս կոչեցեալ հակառակորդ հա-
տուածը, եւ թէ ինքը ճիշտ այս նպատակով է որ կը ստո-
րագրէ այդ հեռագրին ներքեւ, իւրացնելով Հաշտարար
Մարմնին բոլոր տեսակէտները:

Հոկտ. 15, Հինգշաբթի իրիկուն հրապարակային ժո-
ղովի մը մէջ, որուն հրաւիրուած էին բոլոր Ձեռնաշնորհները,
Հաշտարար Մարմնի Նիւ Եորք մեկնող անդամները տուին
իրենց գործունէութեան պատմութիւնը, ինչպէս նաեւ այն
եզրակացութիւնները որոնց յանդած էին անոնք:

Մինչ հոս Հաշտարար Մարմինս կ'աշխատէր Հաշտու-
թեան ելը մը գտնել, հոն՝ Շիքակոյի մէջ երկու կեղծ հե-
ռագրներ կը պատրաստուէին եւ կը ղրկուէին Լօրէնս իրենց
հեռագրուելու համար երեւակայական Կեդրոնի անունով.
Ս. Յակոբեան պատուոյ խօսք տուաւ մեզ որ այդ հեռա-
գրները պիտի չվերադարձնէ, եւ սակայն վերջէն իմացանք
որ ան իր պատուոյ խօսքը ղրկելով տուած է այդ հեռագրի-
ները՝ երեւան հանելով խաղցուած ստորին արարքը:

Այդ հեռագրիներուն մէջ գրուած էր նաեւ Հաշտարար
Մարմնի անդամներէն Գասպար Եղմուրեանի անունը իր-
բեւ դանձապահ: Հաշտարար Մարմինս կուզայ բացարձակա-
պէս յայտարարելու որ խարդախ, կեղծ, վարկաբեկիչ եւ
անուանարկիչ կը գտնէ այդ հեռագրերը:

Սոյն ժողովին մէջ Գասպար Եղմուրեան յայտարարեց
որ ինք ոչ միայն անդամ չէ ենթադրեալ Կեդր. Վարչու-
թեան, այլ նոյն իսկ ընդդիմադիր չէ Նիւ Եորքի Կեդր. Վար-
չութեան, եւ թէ համաձայն է Հաշտարար Մարմնի տեսա-
կէտներուն:

Ան նաեւ յետս կը կոչէ եւ ներողութիւն կը խնդրէ Հաճի
Աւետիս Էղմանեանէ, անոր հանդէպ ունեցած անվայել ըն-
թացքին համար:

Հաշտարար Մարմինս Նիւ Եորքի Կեդր. Վարչութիւնը
գտած է արդարանալի այս խնդրոյն մէջ, եւ անոր գործու-
նէութիւնը խիստ զնահատելի ու վեր ամէն քննադատութե-
նէ: Կուզանք յայտարարելու որ Կեդր. Վարչութեան մասին
խօսուածները անհիմն ամբաստանութիւններ եղած են:

Այս բոլորէն վերջ կոչ կ'ընենք բոլոր Ձեռնաշնորհներու,
որ միանան Միութեան, կանգնին Կեդրոնական Վարչութեան
կողքին, եւ եթէ երբեք եղած են ու կան անկանոնութիւն-
ներ, զանոնք շտկել աշխատինք առանց կռիւի եւ նիւթական
մսխումներու, որոնց վնասը միշտ ալ վերաշինաց Միութեան
կը հասնի:

Հաշտարար Մարմնի Անդամներ
ԿԱՐԱՊԵՏ ԷՕՔՍԻԻՋԵԱՆ
ԱՍԼԱՆ ԿԷՕՔՃԱՅԵԱՆ
ԱԻԵՏԻՍ ԷԳՄԱՆԵԱՆ

Լօրէնս

ԽՕՍՔ ՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐՈՒՍ

Բարի եւ աղնիւ հայրենակիցներս,

Մտադրած եմ մօտ ատենէն ձեզ այս երկիրը երթալու
համար զէպի Սիւրիա: Հայրենակցական աւագ պարտակա-
նութիւն կը սեպեմ, երթալէս առաջ իմ հայրական յորդոր-
ներս տալ իմ պաշտելի ծննդավայրին՝ Ձեռնաշնորհ գաւակնե-
րուն:

Վերջին մի քանի ամիսներու ընթացքին, Ձեռնաշնորհ Վերջ.
Միութեան շուրջ ծագած անախորժ գէպքերը իւրաքանչիւր
հայրենակցի սրտին մէջ վէրք մը բացին: Այդ վէրքը բուժե-
լու համար կը խնդրեմ որ ձեր գծուծ եսը զոհելով, կրկին
բոլորուիք Կեդր. Վարչութեան շուրջ, իրազործելու համար
մեր վեհ նպատակը, այն է մեզ ամէնուս սիրելի ծննդավայ-
րին յաւերժացումը նորածին Հայաստանի մէջ:

Ասիկա պատեհութիւն պիտի տայ մեր հայրենակիցնե-
րուն, որ Ձեռնաշնորհ եւ Ձեռնաշնորհները փրկեն բարոյական եւ
Փիլիքական փճացումէ: Հակառակ պարագային օտարու-
թեան մէջ մնացողները քիչ ատենէն պիտի ձուլուին եւ ան-
հետին:

Կրկին կը խնդրեմ որ ստող եւ զրպարտող չահասէրնե-
րուն եւ սին փառասէրներուն կարեւորութիւն չտաք... հարկ
է որ ձեր խոստումը անթերի կատարէք, նախ՝ ձեր պատիւը
փրկելու համար: Երկրորդ՝ նորածին Հայաստանի շինարա-
րութեան օգնելու համար: Երրորդ՝ Ձեռնաշնորհ անունը անմա-
հացնելու համար: Պէտք է գիտցած ըլլաք որ ժամանակի ըն-
թացքին Հայաստանը զօրանալով պիտի ընդարձակուի եւ մեր
զոհողութեամբ Հայաստան մեկնողներուն յաջորդները պի-
տի կատարեն իրենց պարտքը՝ յուշարձան մը կանգնելով՝
եւ մեր անունները քանդակելով անոր վրայ:

Կրկին եւ կրկին կը խնդրեմ որ իմ վերջին յորդորս ա-
կանջի թող չընէք: Քիչ ատենէն պիտի բաժնուիմ ձեզմէ եւ
ո՛վ գիտէ թերեւս ասիկա ըլլայ յաւիտենական բաժանում
մը:

Մնաք բարեւալ:

ՀԱՅԻ ԱԻԵՏԻՍ ԷԳՄԱՆԵԱՆ

Լօրէնս, Մէս.

ՇԻՆՈՂՆԵՐԸ ԵՒ ՔԱՆՊՈՂՆԵՐԸ

Դեռ չառ լաւ կը յիշեմ ու թերեւս ամբողջ կեանքիս մէջ
չմոռնամ այն պատմութիւնը, որ 1912ին պատմեց մեր յար-
կելի հայրենակից (այժմ մեռած) Պրն. Աւետիս Թուխլոյ-
եան: Լուսահոգի Աւետիս եղբայրը շատերու համար իրա-
կան հայրիկ մըն էր իր տուած բարի խրատներով եւ հայ-
րենասիրական թելադրութիւններով. ինքը եղած էր մեր
հին պանդուխտներէն մին եւ իր վրայ կը մարմնացնէր իրա-
կան հայրենասէրի եւ ազգասէրի ամէն յատկութիւնները:
Իր յիշատակը յարգելու համար յարմար նկատեցի մեր այ-
ւօրուան զրելիքներու յառաջարան ընել իր պատմութիւնը:

Հայրենակցական ժողովէ մը տուն կը վերադառնայի
գլխիկոր: Աւետիս եղբայրը զգաց տխրութիւնս եւ ուզեց հե-
տաքրքրելի տխրութեանս պատճառներով: Նախ չուզեցի
բան մը ըսել, իսկ ստիպեց որ յայտնեմ իրողութիւնը:
Հասկցուցի թէ ժողովէն կուզամ եւ անկէ կրած տպաւորու-
թիւններս եւ տխրութեանս պատճառը, քանի որ շատ մը ան-
տեղի խնդիրներ եւ նոյնքան ալ կարգ մը անպատասխանա-
տու հայրենակիցներու կողմէ յարուցուած խառնակութիւն-
ներ պատճառ եղան որ լաւ ու օգտակար գործեր ամլութեան
դատապարտուին եւ խանգարուին: Եւ սողմ մը յատուկ ափ-
սոսանքով զարմանք յայտնեցի թէ ո՛րքան չար ու անխիղճ

լլալու են որ իրենց հայրենիքին եւ անոր զաւակներուն օգտակարութեան համար սկսուած գործի մը մէջ անձնականութիւն եւ քինախնդրութիւն կը մտցնեն:

Այս խնդիրը կը պատահէր Լօրէնսի մէջ, մեր հայրենակցական եռուղեւի օրերուն: Դպրոց, ինքնապաշտպանութիւն եւ այլ կարգի գործեր կը զբաղեցնէին մեզ: Կրկին ու կրկին վիշտս յայտնեցի մեր բարի ծերուկին, թէ արդեօք ի՞նչ կարգի Չնդուցիներ էին անոնք որ անխղճօրէն հակառակ վերաբերում կ'ունենային այս կարգի նուիրական եւ հայրենասիրական գործերու հանդէս:

Ծերուկը որ մինչեւ հոս ինծի մօտիկ ըրած էր, յանկարծ ձեռքը ուսիս դրաւ եւ ըսաւ.

— Մի զարմանար տղաս, հարերը չեն ճանչնար լաւն ու բարին, անոնք թերեւս իրենց ծնած օրէն լաւին ու օգտակարին մասին չեն մտածած իսկ. այդ կարգիները կ'առաջնորդուին իրենց անձնական եսէն ու շահէն եւ հաճոյք կը զգան երբ կարենան քանդել այն որ չեն կրնար շինել: Այս առթիւ քեզի պատմեմ պատմութիւն մը, որպէս զի հասկնաս թէ քինախնդիր ու չար մարդիկ ո՞րքան կրնան ստորնանալ իրենց արարքներուն մէջ: Եւ այսպէս սկսաւ պատմութիւնը:

Ճէֆ, հակառակ որ տարիքը առած եւ զաւակներու տէր եղած էր, տակաւին ոեւէ լաւ եւ բարի գործ մը արձանագրած չէր իր անունին, այնպէս որ գիւղին մէջ ճանչցուած էր անպէտ ու աննշան էակ մը եւ ծանր բեռ մը իրեններուն վրայ. ինքը եւս գիտակ էր այդ վիճակին, որով մասնաւոր նախանձով մը լեցուած էր իր հասակակիցներուն ու բարեկամներուն հանդէս, քանի որ անոնք իրենց կարողութեան չափով ունեցած էին լաւ գործեր եւ յառաջդիմութիւններ, օգտակար հանդիսանալով գիւղին եւ համայնքին: Իսկ Ճէֆ իր սղարի վիճակին վրայ նայելով աւելի եւս կը կատգէր ու կը դայրանար:

Իրիկուն մը, ուշ առտն, երբ Ճէֆ գինով վիճակի մէջ տուն կը վերադառնայ, յանկարծ աչքին կը հանդպի դիմացի անկիւնը նորակառոյց եկեղեցի մը, որուն դրան վրայ աղօտ լոյսի մը տակ գրուած էր այն անձին անունը որ շինել տուած էր եկեղեցին: Նորակառոյց եկեղեցիին բարերարը իր թաղին եւ դպրոցին ընկեր ծանն էր, որ արդէն գիւղին համար ըրած իր բարի գործերով անուանի եղած էր բոլոր գիւղացիներուն մէջ: Ճէֆ անգամ մը եւս աչքին առջեւ կ'ունենայ իր վիճակը, եւ շուտով կը բռնուի նախանձի եւ չարութեան նոպաներէն, կ'որոշէ քանդել եկեղեցին, եւ չէնքին ամէնէն տկար մէկ մասէն կը սկսի կրակ տալ: Երբ կրակը լսիկը կը սկսի շէնքը, Ճէֆ մէկ կողմ քաշուած դիտելով կը հրճուի, քանի որ իր չկրցած շինածը կը քանդուէր իր ձեռքերով:

Վրայ կը հասնին ոստիկանները եւ Ճէֆը ձերբակալելով կը տանին ոստիկանատուն: Երբ ոստիկանապետը կը հարցնէ թէ ինչո՞ւ այրեցիր գիւղի եկեղեցին, Ճէֆ առանց տատամսելով կը պատասխանէ. — «Ուրիշին լաւ գործերը նախանձս չարժեցին, ես ասակ չեմ լաւ եւ բարի բան մը ընելու որ իմ անունս ալ յիշուի. կը յուսամ թէ եթէ օր մը նոյն եկեղեցին վերաշինուի, գիւղացիները զիս ալ պիտի յիշեն իմ չար արարքովս»:

Ինչո՞ւ զարմանալ ուրեմն, որ մեր մէջ ալ կան Ճէֆեր, որոնք իրենց քանդումով կը յուսան հետք մը, յիշատակութիւն մը թողուլ իրենց անպէտ կեանքէն:

Պատկերը նոյնն է այսօր մեր հայրենակցական գործերուն մէջ, եւ Ճէֆերու տեսակէն մարդիկն էին որ իրենց անձնական նեղմտութենէն ու չար նախանձէն տարուած, խանգարեցին Յուլիս 4-ի մեր Տրդ. Պատգ. Ժողովը. նոյն ապիկար

չար ողիններն են որ կ'ուզեն քանդել ու ձախողեցնել Չնդուցի վերաշինաց Միութեան հայրենաշէն ու օգտակար գործը:

Սարգիս Յակոբեան, Գասպար Մինասեան եւ Մելիք Խաչոյեան ցոյց տուին իրենց դործերուն մէջ թէ իրապէս թըշնամի են եւ չեն կրնար հանդուրժել մեր հայրենակցական Միութեան դօրացման եւ յառաջդիմութեան, քանի որ անոնք իրենց քանդումի ապիկար գործը սկսան մեր ամենաշատ աղբիւնաւոր եւ փայլուն մէկ շրջանին:

Այս երեք անձերն ալ իրենց պաշտօնին բերումով միշտ գիտակ եւ յարաբերութեան մէջ էին Կեդրոնի 1930-1931 շրջանի բոլոր գործառնութեանց: Ես, որպէս Կեդրոնի աջ շրջանի անարժան մէկ անդամը, տասէն աւելի նամակներ կրնամ ցոյց տալ, թէ անհատական եւ թէ մասնաճիւղային որոնց տակ ստորագրողները եղած են Սարգիս Յակոբեան իբրեւ Լօրէնսի մասնաճիւղի ատենապետ, Մելիք Խաչոյեան՝ իբրեւ Նիւ Եորքի մասնաճիւղին ատենապետ, իսկ Գ. Մինասեան՝ իբրեւ Եւոնիլի մասնաճիւղի ատենապետ: Այս մարդիկը ամբողջ տարի մը լաւ եւ ողջմիտ նկատեցին Կեդրոնի բոլոր գործերը, ոչ մէկ օր խօսք ու խնդիր հանեցին Շիքակոյի դատին մասին, ընդհակառակը Մելիք Խաչոյեան եւ Գասպար Մինասեան իրենց մասնաճիւղերուն կողմէ գրեցին որ՝ «մեր մասնաճիւղի Ժողովին մէջ նկատի առնուեցաւ Մաքքըրի ի նպատակ Միութեան տուած վճիռը, մասնաճիւղս կը լիազօրէ իր Կեդրոնը որ եղած ծախսերը դանձելու համար եւս յարմար հետապնդումն ընէ Շիքակոյի մեր հակառակորդներուն դէմ»:

Ուրեմն ամբողջ մէկ տարի այս մարդոց կողմէ ոչ մէկ դիտողութիւն եղած է, ընդհակառակը զնահատած են մեզ իրենց նամակներով, իսկ Ս. Յակոբեան կը պարծենար թէ իր քուէով Լօրէնսէն 400 տոլար զրկուած է Կեդրոն, որովհետեւ ոչ մէկ առարկութիւն կարելի էր ընել Կեդրոնի կատարած գործերու մասին: Իսկ ի՞նչ ըսել Մելիք Խաչոյեանի, որ 1929-30 եղած է Կեդր. Վարչութեան անդամ եւ այդ շրջանին մէկէ աւելի վճարումներ եղած են Շիքակոյի դատին համար՝ իր ծախս: Ուստի ի՞նչ արժէք կը ներկայացնէ այս մարդոց պոռալ կանչելը թէ Շիքակոյի դատը Կեդրոնը իր ուղածին պէս ըրած է եւ մասնաճիւղերը անտեղեակ պահուած են:

Բայց այս մարդոց վերջին ժամուն հանած վրան բաց աղմուկը ուրիշ բան չէ, եթէ ոչ անձնական շահ եւ եսամտութիւն:

Կեդրոնը մերժեց Մ. Խաչոյեանի եւ Գ. Քէհեախչոյեանի երաշխաւորութեամբ Պ. Նիզամեանի նոր գնելիք նւթալարավաճառի խանութին համար ուղուած հարկը յիշուն տոլարի փոխապատմութիւնը: Այս մերժումը Ս. Յակոբեանի եւ Գ. Մինասեանի ալ արտօրակա խանգարած է, եւ ուստի իրենց երեսը Շիքակոյի իրենցիներուն դարձուցին, յուսալով որ դատին բերումով կապուած 3000 տոլարէն մաս մըն ալ իրենց կը հանուի, որովհետեւ Շիքակոյիները այս կարգի ոսկորներ նետած են իրենց առջեւ: Բարի արտօրակ:

ԱՅՔ ՄԵՆ

ՆԱՄԱԿ ԿԵՂՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Չնդուցի վերջ. Միութեան Կեդր. Վարչութիւն
Նիւ Եորք

Յարգելի հայրենակիցներ,

Երբ Լօրէնսի մէջ Սեպտ. 6-ին Պ. Սարգիս Յակոբեանի հրաւերով պատգամաւորական Ժողով տեղի կ'ունենար, վերջիջեալը զիս եւս Ժողովի հրաւերեց: Ես իրեն պատաս-

խանցի թէ պիտի չգամ, որովհետեւ ստիպուած եմ Սբրինկ-
ֆիլտ երթալ: Հակառակ իմ բացակայութեանս զիս դանձա-
պետ ընտրած են: Երբ վերադարձայ Լօրէնս, Յակոբեան ին-
ծի ըսաւ թէ դուն մեր դանձապահը նշանակուած ես: Ես ի-
րեն ըսի թէ ատոնք մէկ կողմ ձգէ, ես պիտի աշխատիմ հաշ-
տութիւն գոյացնել երկու տարրերուն միջեւ:

Սեպտ. 15-ին Պ. Պարսումեան, Պ. Չոնդոյեան եւ Հաճի
Ա. Էդմանեան ու ես ժողով գումարեցինք Պ. Չոնդոյեանի
տան մէջ, որպէս զի կարենանք հաշտութիւն գոյացնել երկու
կողմին հասկցողութեամբ: Երկրորդ ժողով մը տեղի ունե-
ցաւ Հոկտ. 1-ին Պ. Էդմանեանի տան մէջ: Ներկայ էին նաեւ
Պ. Խօքսիւզեան եւ Պ. Կէօքճաեան: Որպէս հաշտարար մար-
մին խորհրդակցեցանք օգտակար խնդիրներու շուրջ եւ ու-
րուցեցինք Նիւ Եորք դրկել Պրնք. Էօքսիւզեան եւ Կէօքճաեան,
ձեզի հետ հասկցողութեան մը գալու համար:

Այսքան անկեղծ աշխատանքիս փոխարէն կ'իմանամ որ
Նիքակոյէն հեռազրի մը պատճէնը զրկուած է ձեզի, ուր իմ
անունս գրուած է իբրեւ զանձապահ: Ես երբեք լուր չունիմ
այդ տեսակ հեռազրի մը եւ բացորոշ կերպով կրնամ ըսել
թէ իմ անունս չահագործած են:

Ուստի պիտի խնդրէի որ, եթէ կարելի է, իմ անունիս
չահագործուելը «Ծօլաւ»-ին մէջ հրատարակէք, որպէս զի
հայրենակիցները գիտնան որ ես լուր ունեցած չեմ եղածէն:

Մնամ անկեղծ բարեկենդիկ

ԳԱՍՊԱՐ ԵԱՂՄՈՒՐԵԱՆ

Լօրէնս, Հոկտ. 15, 1931

Չնգուշի Վերաշինաց Միութեան
Կեդրոնական Վարչութիւն,

Յարգելի հայրենակիցներ,

Մարտէյի մասնաճիւղին կողմէ խորին շնորհակալու-
թիւն կը յայտենք Կեդրոնին մեզի դրկած չրջարեւականե-
րուն եւ նամակներուն համար, որոնք իրենց ժամանակին
ստացած ենք:

Նոյնպէս զնահատանքի արժանի են Կեդրոնին տարած
աշխատանքները Միութեան նիւթական եւ բարոյական յա-
ռաչութեան համար:

Մեզ զրկուած չրջարեւականներուն եւ նամակներուն
պարունակութիւնը Շիքակոյի քանի մը անհատներուն յա-
րուցած դժուարութեանց մասին է: Ասիկա ցաւալի է իսկա-
պէս: Թէեւ մեզի շատ խօսք ըսել չիյնար, բայց այդ կարգի
անհատները թող իրենք ամէն իրենց ըրածներէն: Մենք
վստահ ենք որ իրականութիւնը վերջնական յաղթանակը պի-
տի տանի:

Վստահ եղէք որ մենք որեւիցէ ժամանակ կարեւորու-
թիւն տուած չենք ուրիշներու աշխատել գրածներուն: Միեւ-
նոյն ժամանակ չենք ալ կրնար անտարբեր մնալ, քանի որ
մենք ալ հարազատ զուտակներն ենք Չնգուշի հայութեան եւ
մեզի ալ կը պատկանին Միութիւնը շահագորդող հարցերը:

Ուրախ ենք նաեւ որ Սեպտեմբերի Պատգ. ժողովը ան-
ցած է խաղաղ եւ արդիւնաւոր:

Շնորհաւորելով Կեդր. նորընտիր Վարչութիւնը, կը
մաղթենք յաջողութիւն հայրենակցական բոլոր գործերու:

Մարտէյի մասնաճիւղին կողմէ եւ վիճակը կը մնայ
հաստատ գիտնի վրայ եւ մեր հայրենակիցներու յարաբերա-
կան կապը աւելի քան երբեք սերտ է: Յաճախակի խորհրդ-
րակցութիւններ կ'ունենանք Միութեան շուրջ:

Ինչպէս ըսինք, բնաւ կարեւորութիւն չենք տար այն
հայրենակիցներու, որոնք սեւ սրտօրէն կ'ուզեն քանդել Վե-

րաշինացը, նաեւ անոնց որ հպարտ սրտով, արհամարհան-
քով եւ միայն հեռուէն կ'ուզեն զիտել Վերաշինացը:

Մնամք հայրենակցական բարեկենդիկ եւ սիրով՝

Ի դիմաց Չնգուշի Վերջ. Մարտէյի Մասնաճիւղին
Ատեմապետ՝ Խ. ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ
Ատեմապետի՝ Պ. ՏԱՐՂՈՒՆԵԱՆ
(Կնիք)

Պատուարժան Ատենապետ եւ Անդամք

Չնգուշի Վերջ. Միութեան Կեդր. Վարչութեան
Նիւ Եորք

Սիրելի հայրենակիցներ,

Չնգուշի Վերջ. Միութեան Կեդր. Վարչութեան տեղ-
ւոյս մասնաճիւղին հասած է Ա. եւ Բ. չրջարեւականները,
սրտնցմէ տեղեկացանք թէ՝ Բ. Պատգ. ժողովը տեղի ունեցած
է Նիւ Եորքի մէջ եւ ընտրուած է նոր Կեդր. Վարչութիւն
մը:

Տեղւոյս վարչութիւնը անկեղծօրէն զնահատելով Պատ-
գամաւորական ժողովին հայրենասիրական ոգին ու առողջ
գործունէութեան շուրջ իր ցոյց տուած կատարեալ գիտակ-
ցութիւնը, ջերմապէս կը շնորհաւորէ նորընտիր Կեդր. Վար-
չութիւնը եւ կը մաղթէ որ իր վրայ դրուած յոյսերն ու վըս-
տահութիւնը գովելի ձեռնհասութեամբ արժանացնէ:

Երկրորդ՝ ձեզ կը ձգենք կարգադրութիւնը Շիքակոյի
մեր կարգ մը հայրենակիցներու կողմէ ցոյց տրուած ծանօթ
րմբոստութեան հետեւանքով յառաջ եկած անհաճոյ եւ տը-
խուր դէպքերուն, եւ սակայն փափաքող ենք որ խնդրոյն կա-
րելի եղած չափով իրաւաստութեամբ եւ ներող ոգիով մը
վերջ տրուի: Մենք դարձեալ փափաքող ենք, որ այդ մեր
խելագարները ընդունելով իրենց սխալները խոնարհին Կեդր.
Վարչութեան առջեւ, հակառակ պարագային թող մեզ չչա-
հագործեն. մենք իրենց խօսքովը մէկ քայլ տեղ գացողներ
չենք. ոչ իրենց կը վստահինք եւ ոչ ալ իբր հայրենակից կը
ճանչնանք, այդպիսիները հեռու մեր մէջէն. այսքանը դա-
ցին՝ իրենք ալ պակաս թող ըլլան, քանի որ ամօթին ինչ է
չեն գիտեր եւ հայրենասիրական ոգին իրենց մէջ մեռած է:

Այսօր երբեք տարի է որ ետ թողուցած են մեր Վերաշի-
նացի գործունէութիւնը. այդ պիտակաւորները վնասեցէք
չարքերէն եւ աշխատեցէք թոյլ չտալ այդ անխոհմտներուն
որ լեզու չարժեն: Այլասերածները, որոնք առանց քննի մը
քաջուելու եւ կարմրելու «Երիտասարդ Հայաստան» շին-
ծու ստեղծելով լեցուցած հոս հոն դռնուող բոլոր հայրենա-
կիցներու կը զրկեն, ինչպէս նաեւ կոչեր: Մենք երբեք չենք
սպասել որ այդպիսի փրովաֆախոններէ. մենք լաւ գիտենք
թէ անհիմն են, թող այդ թերթն ու կոչերը իրենց ննջարան-
ներուն պատերը փակցնեն որ իրենք ու իրենց մատամները
կարգան, մենք պէտք չունինք եւ չենք ուզեր որ իրենց նման
այլասերած թափթիւղներու հետեւելով արատ թողունք
մեր ճակտին վրայ: Եթէ իրենք թերթ ծախել կամ սպասել
կ'ուզեն, լաւ կ'ընեն եթէ այդ թերթին մէկ մէկ գումար ի-
րենք չնորհէ ընեն. մենք պէտք չունինք, միայն կը ցաւինք որ
կարգ մը անմեղ երիտասարդներու մաքուր մտքերը պղտո-
րելով իրենց համակիր բրած են. վստահ ենք թէ՝ այդ մա-
քուր սիրտ ունեցող հայրենակիցները մօտ ատենէն պիտի ըզ-
զան իրենց սխալները ու պիտի դան հայրենադոհ հայրենա-
կիցներու շարքերուն մէջ՝ ուժ տալու Կեդր. Վարչութեան:

Այս մասին այսքան. գալով Հայաստան երթալու խնդ-
րոյն, կը խնդրենք որ տեղւոյս մէջ գտնուող հայրենակից-
ներու փափաքին համաձայն կարգադրութիւն մը ընէիք որ
յառաջիկայ կարաւանին (որ 2000 Հայեր պիտի փոխադ-

րուին Սիւրիայէն) ամէնքս ալ միանայինք . այլեւս ձեր հայ-
րենասիրական գլխացումներուն թողելով՝ կը մայրթենք ուժ
եւ կարողութիւն ձեր բոլոր գործառնութեանց յաջողութեան
համար:

Ընդունեցէք մեր հայրենակցական ջերմ բարեւներն ու
յարգանքները՝

Ի դիմաց Զնգուշի վերջ. Միւսթեան
Հալէպի Մասնաճիւղի վարչութեան
Ատեմապետ՝ Մ. Թ. ՓՈՒՍՈՒԼԵԱՆ
Ատեմապետի՝ Ն. ՓԱՊՈՒՃԵԱՆ
(Կնիք)

Զնգուշի վերջ. Միութեան Կեդր. վարչութիւն

Յարգելի հայրենակիցներ,

Շիքակոյի դատաւարութեան շուրջ «Պայքար»-ի մէջ ե-
րեւցած վերջին հրատարակութիւնը մեզի մեծ դարմանք եւ
ցաւ պատճառեց: Մենք չենք կրնար հաւատալ թէ ի՞նչպէս
կ'ըլլայ որ կարգ մը հայրենակիցներ նոյն իսկ կը զիջանին
խարդախութեան եւ դաւադրական գործերու, սոսկ իրենց
եսը եւ կիրքը յազեցնելու համար:

Ֆրէդնոյի մասնաճիւղը խստիւ կը բողոքէ այս անվայել
ընթացքին դէմ եւ կուզայ անգամ մըն ալ յայտնելու թէ ինք
կը մնայ Կեդրոնի կողքին եւ կը դատաւարտէ Միութեան շա-
հերուն հակառակ գործող հայրենակիցները:

Անմիաբանութիւնը եւ կոխները այս պարագաներուն
տակ՝ կրնան շատ սուղի նստիլ մեզի: Մենք կը ծրարենք
10 տուն շինել Հայաստանի մէջ եւ մեր հայրենակիցները փո-
խադրել հոն՝ Նոր Զնգուշի հիմը դնելու համար: Բարեբախ-
տաբար Նուարաշէնը կը շինուի եւ ներգաղթն ալ սկսած է,
իսկ մենք փոխանակ մեր բոլոր ուժերը այս անյետաճգելի
գործերուն տրամադրելու, կը վիճինք, կը կռուինք եւ պա-
րապ ժամանակ կը վատենք:

Մենք կը դատաւարտենք Սարգիս Յակոբեանի ընթացքը
եւ կոչ կ'ընենք որ ան եւ իր համախոհները մոռնան իրենց
ոխն ու եսը եւ դարձեալ Միութեան շուրջ բողոքուին:

Մեր բաղձանքն ու խնդիրքն է որ բոլոր Զնգուշցիներ հա-
ւաքուին Միութեան սեղանին շուրջ եւ անկեղծօրէն աշխա-
տին անոր յառաջդիմութեան համար:

ԶՆԳՈՒՇԻ ՎԵՐՇ. ՄԻՈՒԹԵԱՆ
ՖԻԷՋՆՈՅԻ ՄԱՍՆԱՃԻՒԳ

Զնգուշի վերջ. Միութեան Կեդր. վարչութիւն

Նիւ Եորք

Սիրելի հայրենակիցներ,

Մինչ Սեպտ. 1 թուակիր նամակով զրկուած դուժկան
չըջաբերականին առթած վշտին ու յարուցած արդար դայ-
րոյթին մէջ կը տարուբերուէինք, ստացանք նորրոնի Կեդր.
վարչութեանց Ա. եւ Բ. աւետարներ չըջաբերականները, ու-
րոնք իրենց անմիջական ազդեցութիւնն ունեցան այնքան
տառապած եւ այս վերջին խնդրով զրեթէ յուսալքուած հայ-
րենակիցներու վրայ: Իրապէս, գովելի եւ ծափահարելի է
Կեդր. վարչութեան, պատգամաւորներու եւ մասնաճիւղե-
րու բռնած կտրուկ եւ անսպառ ընթացքը՝ հանգէպ խաւա-
րով լոյսին յաղթելու չափ ունայնամիտ եղող անուղղանե-
րուն: Այս Զնգուշցիութեան անվայել գայթակղութիւնը,
յուսանք թէ շառաչուն եւ վերջնական ապրտակը կ'ըլլայ դեռ
ասանկ մտքեր որոճացող կարգ մը քինախնդիրներուն, որոնք
վերաշինացի անառիկ ամբողջին բախելու անխոհեմութիւնն
ու անխղճութիւնը ունեցան, կարծես անուղղակիօրէն հան-
րութեան պարզել ուղեցին Միութեան գերազանցութիւնը եւ
իրենց ողորմելիութիւնը:

Հաճոյքով կը զրկենք մեր շնորհաւորութիւններն ու շնորհակալութիւնները, առնուած եւ ապագային առնուելի
աւելի արգիւնաւոր քայլերուն համար: Անշուշտ դուք
բերկրութեամբ լսեցիք Հայաստանի վարչապետին Փարիզի
այցելութենէն ետք՝ ներգաղթի անմիջական հարցին բնակա-
նոն եւ զրական փուլի մը մէջ մտնելը: Այս տարի Սիւրիա-
յէն, որքան որ ստուգեցինք, առաջին կարաւանով 500 եւ
երկրորդ կարաւանով 1800 հոգի պիտի երթան: Արդէն ա-
ճանադրութեան գործողութիւնները սկսեցան, ժողովուրդը
կը զրուի, ինչպէս նաեւ մեր հայրենակիցներէն շատերը
ի՞նչ կը խորհի վերաշինացի, երբ պատահութիւնը դուռն է
եկեր: Ի՞նչ կը թելադրէ Կեդր. վարչութիւնը: Հաճեցէք ար-
կենսական հարցին համար պէտք եղած տեղեկութիւնները եւ
բռնուելիք զիրքը՝ մեզ կարելի եղածին չափ շուտ խմաց-
նել:

Նաեւ ձեր ուշադրութեան կ'ուղենք յանձնել ուրիշ խնդ-
րական պէտք մը: Հակառակ որ մեզ համար շատ ծանր ու
նուաւագուցիչ կը թուի միշտ Կեդրոնին բեռ ըլլալու պա-
րապան, բայց վստահ ըլլալով մեզ պէս անբախտ եւ անկար-
մասնաճիւղերու հանդէպ ունեցած բարեացակամութիւն-
նիդ՝ համարձակութիւնը ունեցանք: Քաղաքիս մէջ չքաղ
հայրենակիցներու 5 պղտիկներ կան, որոնք պիտի զրկուին
զպրոցի կենսական վառարանէն, եթէ տարեկան իւրաքան-
չիւրը 5 տոլարի չափ կողդ դուժար մը չկրնան ճարել: Արդ-
եօք չէ՞ք կ'ընար 25 տոլարով, վաղուան «Նոր Զնգուշ»-ի նոր
սերունդը կազմողներուն խմացական սնունդ հայթայթել:
Նաեւ պիտի խնդրէինք որ նկատի ունենաք Տիկ. Աղաւադ-
եանի, Գառպար Մաչուկեանի եւ այլ վեհանձն բայց ողոր-
մութեամբ ապրողներու վիճակը:

Կանխապաշտ շնորհակալութիւններով եւ հայրենակց-
կան ջերմ բարեւներով՝

Ի դիմաց Զնգուշի վերջ. Միւսթեան
Պէյրութի Մասնաճիւղի վարչութեան
Ատեմապետ՝ ՊԵՏՐՈՍ ԳՈՂՈՍՊԻՍԵԱՆ
Ատեմապետի՝ ԱՐՄԷՆ
(Կնիք)

Սան Ֆրանչիսկոյի եւ Օքլենտի Զնգուշցիներս զարմա-
ցումով կը կարդանք Զնգուշցիներու մէջ տիրող անհամե-
րաշխութեան եւ կոխներու լուրերը: Ի՞նչ է պատճառը, ի՞նչ
հարցներ, որ կարգ մը հայրենակիցներ անհաշտ հակառա-
կութեան ելած են ընդդէմ Կեդր. վարչութեան եւ Միութեան
չահերուն համար անչափանդօրէն գործողներուն:

Մենք Զնգուշցիներս կը բողոքենք այն մի քանի անձն-
րուն դէմ, որոնք պատճառ կ'ըլլան Զնգուշցիներու անուղ-
թերթերու մէջ խճրճուելու եւ խայտառակուելու: Կոչ կ'ը-
նենք որ բոլոր Զնգուշցիներ ալ պախտաբանին այս կարգի
նարժան Զնգուշցիները:

Մենք հոս 6—7 հոգի ենք, բոլորս ալ շատ սիրով ենք խ-
րարու հետ եւ ուրիշներու հիացման արժանապատիւ ենք:

Մեր վաժառէն է որ բոլոր Զնգուշցիներ կանգնին Կեդրո-
նի կողքին եւ աշխատին մէկ մարդու պէս՝ Զնգուշի վերա-
նութիւնը եւ հայրենիքի վերաշինութիւնը նպատակաւոր
ունենալով:

Այս կերպով պիտի կրնանք լուծել Տուտանի մէջ նախ-
տակուող մեր սիրելիներուն վրէժը:

Սան Ֆրանչիսկոյէն
ԱԻԵՏԻՍ ՓԻԼՈՅԵԱՆ, ՄԱՐՏԻՐՈՍ ՓԱՓԱՃԵԱՆ
ՕԲԷԼՄԵՆ
ՄԱՆՈՒԿ ՊՅԱՃԵԱՆ, ՊՈՂՈՍ ՊՅԱՃԵԱՆ

ԱՌ Ի ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Զնգուշի վերջ. Միութեան Շիրակոյի Մասնաճիւղս, Կեդր. Վարչութեանէն կը տեղեկանայ որ կարգ մը ինքնապաշտպան խումբարարներ (Խաչօտեան եւ հետեւորդներ) Միութեան Կեդրոնին դէմ ապօրինի յարձակումներ կ'ընեն եւ Միութիւնը կը մղեն նորանոր անհարկի ծախքերու: Մասնաճիւղս Դեկտ. 9-ի իր անդամական ժողովին մէջ նկատի առնելով վերոյիշեալ սրբազան, միաձայնութեամբ որոշեց կանգնել Զնգուշի վերջ. Միութեան եւ անոր օրինաւոր Կեդրոնին (Նիւ Եորք) կողքին, եւ օգնել նիւթապէս եւ բարոյապէս, մինչեւ որ Միութիւնը յաղթահարէ իր դէմ յարուցուած բոլոր դժուարութիւնները:

Ի դիմաց Զնգուշի վերջ. Միութեան Շիրակոյի Մասնաճիւղի վարչութեան

Ատեմապետ
Յ. ԽՈՀԱՐԱՐԵԱՆ

Ատեմադպիր
Մ. Ա. ՅԱՏԱԿԱԼՈՒԻՐԵԱՆ

ԿԵԴՐՈՆԻ ՆԱՄԱԿԸ ՄԵԼԻՔ ԽԱԶՈՅԵԱՆԻ

Նիւ Եորք, Նոյ. 7, 1931

Տիար Մելիք Խաչօտեան

Յարգելի Հայրենակից,

Պրն. Ս. Յակոբեանի կողմէ մեզի դէմ դատ բանալու սրմբըն հասած է մեզի ժամանակին, որուն մէջ յիշուած է թէ ձեր փաստաբանին տրուած բոլոր տեղեկութիւնները ձեր կողմէն հաղորդուած են. հետեւաբար այնպէս կ'եղբակացընենք թէ դուք եւս տեղեկութիւն ունիք այս խնդրէն:

Մեր փաստաբանը անշուշտ հոգ պիտի տանի այս խնդրոյն, սակայն այս քայլերը առնելէ առաջ, Կեդր. Վարչութեան կ'ուզէ ուրիշ պատեհութիւն մը եւս տալ ձեզի, Վերաշինացի դրամը խնայելու համար:

Հարեւանցի կերպով լսեցինք որ Լօրէնսէն մասնաւոր հրահանգներ ստացած էք նորակալմ «Կեդր. Վարչութեան» տեսնապետ? Պրն. Ս. Յակոբեանէ, որ ձեր քով գտնուած գոյքերը յանձնէք մեզի. նոյն ատեն Կեդրոնի դէմ դատ բանալէ հետո մնաք:

Եթէ մտադրած էք որ դատի սկսիք եւ թէ ձեր ու թէ Վերաշինացի Հարեւրաւոր տղարները անհարկի կերպով վատնուին, ատիկա ձեր գտնալիք գործն է:

Կեդր. Վարչութիւնս ամէն բոլոր պատրաստ է ձեզ դիմադրաւելու ուր որ կ'ուզէք, մենք անհամար ապացոյցներով ձեր բոլոր զրպարտութիւնները կրնանք մէկիկ մէկիկ ջախջախել եւ անպարտ դուրս դալ. սակայն Վերաշինացի դրամը եւ չենք կրնար առնել:

Անշուշտ մինչեւ հիմա լսած բլլալու էք թէ Տրդ. Պատգ. Ժողովը որոշեց որ օրինական միջոցով զրաւենք ձեր մօտ գտնուած Նիւ Եորքի մասնաճիւղին գոյքերը. մենք գիտենք թէ ստացած էք թէ՛ մասնաճիւղին, թէ՛ Կեդրոնին եւ թէ մեր փաստաբանին կողմէ գրուած ապահովագրեալ նամակները:

Կեդր. Վարչութիւնը ցարդ գործնական քայլեր չառաւ Վերաշինացի մէկ երկու հարիւր տղարը անհարկի կերպով չգործածելու մտահոգութեամբ միայն:

Մէկ երկու շաբաթէն Կեդր. Վարչութեան կողմէ պիտի հրատարակուի «Ծօվառ» թերթը, որուն մէջ պիտի գրուի մանրամասն կերպով, սա մի քանի ամսուան ընթացքին ձեր եւ մի քանի անհատներու կատարած աղտոտ դերը: Մենք ամէն ճիշդ պիտի թափենք որ ամէն մէկ Զնգուշցիի հասցենք «Ծօվառ»-ի այդ թիւերը:

Կ'ուզենք որ դիտնաք թէ անհամար բողոքներ եկած են, թէ մասնաճիւղերէ եւ թէ անհատներէ, թէ արտասահմանէն

եւ թէ Ամերիկայէն, եթէ կ'ուզէք եւ կը սիրէք լսել եւ կարողալ այս գրութիւնները, ատիկա եւս ձեր գիտնալիք բանն է. անոնցմէ ոմանք չատ կ'ծու են:

Ձեր փաստաբանին միջոցաւ մեզի յանձնուած բողոքադրին մէջ չատ մը սուտերու եւ զրպարտութիւններու չարքին, չէք մոռցած ամբաստանելու Պրն. Ա. Փապուճեան եւ Պ. Ստեփանեան, իրրեւ թէ անոնք Վերաշինացի 5,500 տղարը իւրացուցած են. դուք պէտք է դիտնալիք թէ ատիկա չատ մեծ ամբաստանութիւն մըն է եւ ուղղակի անհատի հետ գործունի, եւ չատ լաւ պէտք է դիտնաք թէ այս պարոնները միշտ պատրաստ են իրենց հաշիւը մաքրելէ վերջ՝ ձեզի դէմ պատուոյ դատ բանալ:

Արդ, յարգելի Հայրենակից, Կեդր. Վարչութիւնս որոշեց պատեհութիւն մը եւս տալ ձեզ, որպէս զի յետս կոչէք ձեր զրպարտութիւնները եւ անմիջապէս ետ վերադարձնէք Նիւ Եորքի մասնաճիւղին գոյքերը որոնք ձեր մօտ կը մնան, ասանկով թէ ձեզ եւ թէ Վերաշինացի պիտի ազատէք հարեւրաւոր տղարներու կորուստէ եւ ժամանակի վատնումէ:

Եթէ ունիք հայրենասիրական փոքր իսկ զգացում մը թաղնուած ձեր մէջ, հրապարակ եկէք պարզ ճակատով: Կը սպասենք ձեր պատասխանին մինչեւ Նոյ. 14: Ձեր լուծիւնը ժխտական պատասխան համարելով՝ անմիջապէս դատարանական գործողութեան պիտի ձեռնարկենք:

Կեդր. Վարչութիւնը կը զրկէ ձեզ այս նամակը միայն մէկ նկատում ունենալով, այն է խնայել ձեր եւ Վերաշինացի դրամը:

Ի դիմաց Զ. Վ. Մ. Կեդր. Վարչութեան
Ատեմապետ՝ Վ. ՓԱՊՈՒՃԵԱՆ
Ատեմադպիր՝ Ա. ՓԱՊՈՒՃԵԱՆ
(Կնիք)

ՍԹԱՓԻՆՔ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

Երեք ամիսէ ի վեր տեղւոյս մէջ կը տիրէ կեանք մը, որ կը նմանի պատերազմական վիճակի մը: Միութեան հակառակորդ Ս. Յակոբեանի «հրամանատարութեան» տակ կ'արձակուին սուտ եւ խաբեայ խօսքերու դեղակներ Զնգուշի վերջ. Միութեան Կեդր. Վարչութեան հասցէին:

Ի՞նչ է այս վիճակին եւ վայնասունին պատճառը, եւ ի՞նչ են այս կեղծ ու անամէջ պոռոտախօսութիւնները: Ի՞նչ է վերջապէս պատճառը, որ տեղւոյս մէջ Ս. Յակոբեան եւ Նիւ Եորքի մէջ Մ. Խաչոյեան կ'աշխատին հրապարակաւ աղամբկելով անպատուել Զնգուշցիներու պատիւը եւ արժանապատուութիւնը:

Ես ատանց վարանելու կուզամ ըսելու թէ ասոնց միակ պատճառը վերոյիշեալներու եսապաշտութիւնն ու փառամոլութիւնն է: Որովհետեւ այս մարդոց քով գոյութիւն չունին ոչ ճշմարտասիրութիւն, ոչ արդարամտութիւն եւ ոչ ալ հայրենակցական մաքուր զգացում: Անոնց համար ոչինչ են բոլոր նուիրականութիւններ, ամէն բան պէտք է քանդուի ու մահանայ, բաւ է որ իրենց կիրքը յազուրդ գտնէ ժամանակ մը համար: Վերջին դէպքերը եկան ապացուցանելու թէ այս մարդիկը կ'ուզեն քանդել մեր շինած շէնքը եւ փճացնել Միութեան անունով հաւաքուած գումարները:

Այս եսապաշտ եւ չարամիտ պարոնները Միութեան դուրս արտաքսուելէ վերջ, միամտութիւնը կ'ունենան կապմեղու երեւակայական Կեդրոն մը Լօրէնսի մէջ, իրենց թեւերուն տակ առնելով իրենց պէս մտածող եւ Զնգուշի անունին նախատինք բերող Շիրակոյի հատուածը:

Շիրակոյի հակառակորդ հատուածը, որ մահամերձ մտաւ զովքիւսմօսի 74-րդ մզկիտի միջոցով:

սոնց գործունեությունն էր, բայց այդ ուժը չկրցաւ ապրեցնել վարակուած հիւանդը, քանզի թոյնը գործած էր արդէն իր աւերը եւ ալ շատ ուշ էր:

Այս երեւակայական Կեդրոնը դատ բացած է մեր Կեդր. Վարչութեան դէմ, պահանջելով ամէն բան, դրամ, դոյք եւ իշխանութիւն: Երբ սա «Կեդրոն» անունը կը լսեմ իսկապէս ծիծաղաւ կուգայ, որովհետեւ ան մեզի շատ մօտ է, մեր մէջ է եւ մենք գիտենք թէ ի՞նչ ողորմելի արարածներ են անոր անդամները եւ ի՞նչ կը ներկայացնեն: Լօրէնսը ունի 3 1/2 մարդ, Նիւ Եորքը 1 1/4, Եռնիւրն Սիթի 1/2 մարդ, իսկ Ֆիլատէլֆիան մե՛նձ դէրօ մը: Ահաւաստիկ այս խոշոր թիւերուն կոթնած է որ այդ երեւակայական Կեդրոնը դատ կը բանայ, պահանջելով ամէն բան: Անշուշտ այս դատաւարութիւնը պիտի ունենայ իր ծախքերը. ես վստահ եմ որ Չնդուչի Վերջ. Միութիւնը պիտի չուզէ ոչ մէկ սէնթ ծախսել, որովհետեւ մենք շատ ու շատ խնամքով եւ գուրգուրանքով կը պահենք Միութեան դրամը՝ գործածելու համար իր բուն նպատակին: Սակայն երբ պարտաւորուած ըլլանք պիտի ծախսենք Միութեան պատուոյն պաշտպանութեան համար, եւ ասոր պատասխանատուութիւնը պիտի ծանրանայ երեւակայական Կեդր. Վարչութեան վրայ:

Հայրենակիցներ, վայրկեանն է որ սթաիլինք եւ հրապարակ գանք մեր ճշմարիտ, անկեղծ եւ մաքուր հայրենակցական զգացումներով՝ պատուելու համար այդ եսասէրներու թմբուկները: Անոնք կ'աշխատին միանգամ ընդ միշտ վնասել Միութեան թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս:

Հայրենակիցներ, պահ մը մեր երեւակայութիւնը տանինք դէպի Տուտան, ուրկէ մեր ականջներուն պիտի հասնին աղիողորմ եւ սրտաճմլիկ ձայներ, որոնք կ'աղաղակեն մեր դարաւոր թշնամիներուն թէ՛ «Մինչ դուք մեզ հոս կը լեցնէք, մենք ունինք դաւակներ որոնք մեր յիշատակը պիտի յաւերժացնեն: Չնդուչի Վերջ. Միութիւնը կը գործէ եւ կ'աշխատի իր նպատակը իրականացնելով՝ յաւերժացնել Տուտանի մէջ անյայտացող մեր սիրելիներուն անմահ յիշատակը. բայց մեր մէջ կը գտնուին Գէորգեան, Յակոբեան, Խաչոյեան եւ անոնց պէս մտածող հայրենակիցներ, որոնք առանց խղճահարուելու եւ առանց այդ մեր սիրելիներուն ճիշդերէն ու աղաղակներէն ազդուելու կը փորձեն անոնց յիշատակը թաղուած պահել անդնդախոր Տուտանին մէջ: Այսօր վայրկեանը եկած է որ դուքս գանք մեր անտարբերութենէն, չարիքը գամենք անարգանքի սրունին եւ ամէն զնով աշխատինք կատարել մեզի յանձնուած նուիրական գործը՝ Տուտանի մէջ կենդանի թաղուած մեր սիրելիներու յիշատակին յաւերժացման ի խնդիր:

Սթաիլինք հայրենակիցներ...:

Լօրէնս

Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԵՐ ԽՐԱՏԸ

Նիւ Եորքէն եւ Շիքակոյէն եկած սուրհանդակը այս անգամ յատկապէս Չնդուչիներու համար եկած էր Հալէպ, մեզ բերելով ծրարներով «Ե. Հայաստան» եւ այլ թոռուցիներ ու նամակներ, որոնք բոլորն ալ անկարգապահութիւն կը բուրբէին իրենց պարունակութեամբ, եւ մեզ ալ անկարգ ըմբոստութեան կը հրաւիրէին: Այս բոլորին մէկ բառով մեր պատասխանը պիտի ըլլայ. — Զուր ջանք, պարապ աշխատանք է որ կը թափուի մեր մօտ:

Ի՞նչ պատճառաւ հետեւինք ձեզի եւ Միութիւնը երկպառակենք պարոն խառնակիչներ, ի՞նչ անուն դնենք եւ ըմբոստանանք Միութեան դէմ, ո՞ր բերդն է որ պիտի դրամենք:

Ո՛չ, ձեր ընթացքը մեզ դէպի կործանում կը տանի: Մենք տակաւին կեղծիք չտեսանք Միութեան մէջ ու անոր վարչաներուն քով, ընդհակառակը միշտ լաւ գործ ու աշխատանք կը տեսնենք: Այս իրողութեան ի տես, ձեր ընթացքէն դատելով աւելի կը դառնանանք ձեզի դէմ, եւ այս պահուս դուք մեր զրուանքին առարկան էք:

Զեր անկարգապահ ընթացքին հետեւիլը յիմարներու գործ է, եւ մենք այդ դասին չենք պատկանիր:

Մեր խրատը ձեզի թող ըլլայ, որ հետեւիք մեր մաքուր ու կարգապահ օրինակին եւ ըլլաք իսկական Չնդուչիներ: Մենք այսպիսիներու պէտք ունինք:

Հալէպ

Մ. ՓՈԽՍՈՒԼԵԱՆ

ՆՈՒԷՐՆԵՐ «ԾՕՎԱՌ»Ի

«Ծօվառ»ի Վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները:

Տէր եւ Տիկ. Ա. Ստեփանեան, Նիւ Եորք	\$5.00
Պրն. Պետրոս Ստեփանեան, Նիւ Եորք	5.00
Պրն. Խ. Ս. Սըրըմեան, Սէլմա	5.00
Պրն. Նիկ. Փապուճեան, Փատուլը	3.00
Պրն. Խ. Շահինեան, Լոս Անճէլըս	1.00
Տիկ. Ա. Գոգմազեան, Լոս Անճէլըս	1.00
Օր. Մ. Ստեփանեան	1.00

Գումար՝

21.00

ԲԱՅ ՍՐՏՈՎ

Զորս տարին կը լրանայ, բայց տակաւին խուլ պայքարը, որ կը մղուի Չնդուչի Վերջ. Միութեան դէմ, չլրացաւ:

Ի՞նչ է այս կործանարար պայքարին շարժառիթը, թե՛րեւս պայքարը մղողներէն շատեր իրենք ալ չեն գիտեր, քանի որ բաց սրտով բան մը չեն ըսեր:

Սակայն մղուած պայքարի բնոյթէն, հրատարակուած գրութիւններէն եւ փոխանակուած կեղծ հեռագիրներէն արեւելք կը հասկնանք թէ՛ Չնդուչի Վերջ. Միութեան վերին իշխանութեան տիրանալն է կռիւը յարուցանողներուն միակ գրգապատճառը:

Ենթադրենք այս յիմար խորհուրդով առաջնորդողները յաջողեցան պահ մը կեղծ միջոցներով ձեռք անցնել Չնդուչի Վերջ. Միութեան վերին իշխանութիւնը, այսինքն՝ Կեդր. Վարչութիւնը: Բայց, ո՞վ պիտի ըլլայ իրենց հետեւողը, ո՞ր մէկ մասնաճիւղն է որ պիտի հանդուրժէ որ իր քուէները ոտնակոխուին եւ կեղծիքով ու բռնութեամբ կառավարուի, եւ այդպիսի Կեդրոնական Վարչութիւն մը քանի՞ օր կանգուն պիտի մնայ: Այս հարցումներուն բաց սրտով թող պատասխանեն անոնք, որ մեր Միութեան դէմ պօրինի արարքներու մէջ կը գտնուին: Իսկ մեր կողմէն մենք բաց սրտով կ'ըսենք թէ՛ Չնդուչի Վերջ. Միութիւնն ունի իր կանոնադրութիւնը եւ մենք մասնաճիւղերս կ'առաջնորդուինք Միութեան կանոնադրով: Տարին անգամ մը մեր օրինաւոր պատգամաւորներով կ'ունենանք Պատգ. Ժողովը կը քննենք մէկ տարուան գործունեութիւնը, կ'ընտրենք նոր Կեդրոնական Վարչութիւնը ու մեր գործերը մեր ձեռքով կը յանձնենք Միութեան նորընտիր Կեդր. Վարչութեան: Եւ մեր Կեդր. Վարչութիւնը կը կազմենք այդպիսի անձնաւորութիւններէ, որոնք յարկ ու արժանիք ունին եւ բոլորիս վստահութիւնը կը վայելեն:

Ուրեմն, ապօրինի միջոցներով Միութեան առաջնորդութիւնը ձեռք ձգել ձգտողները ի դուր թող չաշխատին, եթէ բնիք բան մը ունին այն ալ թող ըլլայ նախ վստահութիւն ներշնչել մեղի եւ գործքով ցոյց տալ իրենց անկեղծութիւնը, որպէս զի արժանանան մեր քուէներուն որով եւ ըլլան առաջնորդներ: Այլապէս մենք մեր բաց սրտով միշտ ալ դէմ պիտի կանգնինք կեղծաւորներուն եւ անարժաններուն:

ՀԱՆ ԱՇՏԱՐԱԿԵՆՑ

«ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ Է»

Հասարակ մի երեւոյթ է տեսնել ամէն տեղ, ամէն օր կայտառ ու առողջ ուսանողներ, մաքուր հագուած, մաշկին կանոնաւորապէս սանտրուած, որոնք զուգահեռ կը դիմեն գիտութեան տաճարները՝ գրքերնին իրենց անութներուն տակ եւ ժպիտը իրենց երեսին վրայ:

Ամէն զարոյց գրեթէ առանց բացառութեան, ըլլայ հասարակաց թէ անհատական, ըլլայ նախակրթարան կամ հասարակարան, ուսանողէն կը պահանջէ բժշկական վիճակաւ եւ կամ կ'ենթարկէ ուսանողները բժշկական քննութեան: Այս քննութեան յայտնի նպատակն է ստուգել ուսանողին ֆիզիքական վիճակը, թէ ուսանողը առողջ է թէ հիւանդ, թէ ազատ է մարմնական աշխատելու թերութիւններէ թէ ոչ: Յետոյ՝ շտկել թերութիւնները եւ բուժել հիւանդութիւնները. ահա իրական պատճառը այս քննութեանց:

«Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ»: Գործնական փորձերով ապացուցուած է թէ այն աշակերտը որ առողջ է ու ունի մարմնային թերութիւններ, չի կրնար ուսանիլ դիւրութեամբ, ան ուշիմ ու յառաջադէմ է, զուարթարար ու բարձր է, որովհետեւ ան չի լսեր ուսուցչին խօսքերը եւ բացատրութիւնները՝ ականջի հիւանդութեանց, կամ չի կրնար տեսնել սեւ տախտակին վրայ գրուածները՝ աչքի տըկարութեան պատճառաւ, եւ ուրիշ ծանր հիւանդութիւններ կարգիլն զինքը կանոնաւորապէս զարոյց յաճախելէ, եւ այսպէս կամ այնպէս ան կ'ըլլայ յետամնաց, բթամիտ ու անար: Գարոյցական յաջողութիւն առ հասարակ կը նշանակէ ապագայ յաջողութիւն գործնական կեանքի մէջ:

Կեանքի պայքարը շատ խիստ է այս երկրին մէջ, թե՛ քան ամէն երկրի մէջ. Հայ մանուկը կամ պատանին պէտք է ըլլայ առողջ մարմնով՝ որպէս զի ըլլայ առողջ մտքով: Մեր յաջողութիւնը կախում ունի մեր հմտութենէն ու ճարտարութենէն, ու մեր ուշիմութիւնը եւ ճարտարութիւնը՝ մեր առողջութենէն: Ասոր համար է որ «Առողջութիւնը հարբստութիւն է», կ'ըսէ Ամերիկեան առածը:

ՏՔ. ԳՐԻԳՈՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ելին, Սեպտեմբեր, 1931
ԾԱՆՕԹ.— Տոքթ. Մանուկեան սիրով պիտի պատասխանէ իրեն եղած բոլոր հարցումներուն:

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ ԳՐ. ՔԷՀԵԱՒԱԶՕԵԱՆԻ ԵՒ ԽԱԶԱՏՈՒՐ ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ ՄԻՋԵՒԻ

Ս. Դ. ՀՆԶ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՔԼԸՊԻՆ ՄԷՋ

Գ.— Բարեւ լոյս Պրն. Սամուէլեան, ի՞նչպէս էք. հրապարակեցիք: (Բարձր ձայնով) Երկու հատ սուրճ...:

Ս.— Ծնորհակալ եմ, դո՛ւք ինչպէս էք, լաւ է՞ք երեւի, ի՞նչ կ'ըսէք:

Գ.— Ի՞նչ մը շատ դրաղած եմ, մանաւանդ սա վերջերս, Վերաշինացի դործերէն աչքերնիս չենք կրնար բանալ:

Ս.— Վերաշինացի դո՛րձ... ի՞նչպէս կ'ըլլայ այդ, օր մը ժողովին չտեսայ քեզ, կը լսեմ որ մեր մասնաճիւղէն հեռացեր էք եւ Կեղերոնին դէմ բողոքներ կը բարձրացնէք. ա՛մօթ է պէ, եթէ ոեւէ բան ունիք եկէ՛ք եւ ժողովին մէջ ըսէք:

Գ.— Ախրար, դուն բանէ խաղար չունիս. չի՞ս լսեր որ սա Կեղերոնի անդամները բոլորն ալ Փրոտ են, մեր ծրագիր կանոնադիրը փոխած են, որոշած են որ մեր ճակտի քրտինքով վատակած զրամը փրոտ տղաքներու համար պիտի դործածեն, որպէս զի անոնք դպրոց երթան, անդին մեր խեղճ հայրենակիցները Սիւրիոյ եւ Ֆրանսայի մէջ անօթի կը տառապին: Դեռ ելեր ես Կեղերոնական Վարչութիւնը կը պաշտպանես:

Ս.— Ի՞նչ կ'ըսես Պրն. Գրիգոր, ես որ գիտեմ այդ ըսածներդ սխալ են, ես այսչափ տարի է ժողովի կ'երթամ կուգամ, ատանկ բան մը չլսեցի. մենք որոշած ենք որ Նուպարաշէնի մէջ Նոր Զնգուշ մը շինենք եւ մեր հայրենակիցները հոն փոխադրենք: Զլսեցի՞ր որ արդէն 2840-71 տուար յանձնուած է Հ. Բ. Ը. Միութեան՝ այդ նպատակին համար:

Գ.— Դուն ալ հաւատացիր ատոնց: Ատոնք բոլորը փրոտի խօսքեր են: Զտեսա՞ր ինչ տեսակ խարդախութիւններով կ'ողէին որ Տիկին Ստեփանեան պատգամաւոր ընտրուի Նիւ Եորքի մասնաճիւղին կողմէ. օր մը սուրբ տալը տեսե՞ր ես:

Ս.— Երտակը ըսելով, հիշ մէկերնիս ալ տարետուրք տուած չենք. բայց այս կ'ինքրուն: Համար առարկութիւն ընելը աւելորդ է. դեռ քանի մը ամիս առաջ էր որ ժողովին մէջ որոշեցինք թէ մեր կիները անդամ պիտի սեպուին, սա՛կայն անոնք ստիպուած չեն տարետուրք վճարելու: Գործերը արդէն թոյլ են, անգամ մըն ալ ելլել եւ անոնցմէ ալ դրամ ուզել, չիտակ է՞:

Գ.— Եթէ ինծի հարցնես, ամէն ով որ տուրք չի վճարեր, քուէ տալու իրաւունք չունի:

Ս.— Այդպէս բան չըլլար, ոմանք չեն գործեր, ոմանք հիւանդ են, ատոնք ի՞նչպէս կրնան վճարել: Զե՛ս յիշեր որ մեր ժողովին մէջ բուռեցաւ թէ անոնք որ կը խորհին թէ կրնան վճարել, պէտք է վճարեն, իսկ անոնք որ չեն կրնար, ի՞նչպէս կրնաս դրամ պահանջել անոնցմէ:

Գ.— Պարապ խօսք, ամէն մարդ ալ կրնայ իր տարետուրքը վճարել եթէ ուզէ: Այդ քու խեղճ կարծածներդ հաղարաւոր տողարներ ունին պանքան:

Ս.— Իրա՛ւ կ'ըսես, ո՛ւրկէ լմացած ես ատոնք: Հոս նայէ որ ըսեմ, այն բանը որ չես գիտեր՝ մի խօսիր: Մինչեւ հիմա ըսածներուդ մէջ կուտ մը չկար:

Գ.— Դուն այդպէս գիտցիր, օր մը կը հասկնաս:

Ս.— Պրն. Գրիգոր, դուք մեր մասնաճիւղի վարչութեան անդամ էիք, ինչո՞ւ հրաժարեցաք, արդեօք սխալ բա՞ն մը տեսաք:

Գ.— Ո՞ր մէկը ըսեմ արարար, մեր հայրենակից Պրն. Նիկոմախի համար երկու հարիւր տուար պարտք ուղեցինք՝ ես եւ ամուսնիս Մելիքը երաշխաւոր ըլլալու պայմանով: Մելիքը գիտե՞ս ես, տուն ունի, խանութ ունի, եւ տակաւին մերժեցին. դուն իմ տեղս ըլլաս չե՞ս հրաժարիր:

Ս.— Երտակ է՛. ես ալ ատեն մը դրամի պէտք ունեցայ եւ Վերաշինացի դիմեցի, չտուին, օրէնքի հակառակ է, սակայն ես հրաժարեցայ Վերաշինացին. չիտակ է՛, ատոր մէջ յանցաւոր ես, բայց ուրիշ բան մը չլսեցի, արդեօք չիտա՞կ է: Լսեցի որ Մելիքին հետ նոր մասնաճիւղ մը կ'աղմած էք եւ դուն ալ ատենապետ եղած ես: Ի՛հ, պաշտօնիդ մեծցած է չըսե՞ս. բայց չիտակ է՛, վաղ անցէք սա սէվտայն, մեղ-

բրդէք մեր արտասահմանի հայերուն. ատանկ անխորհուրդ քայլեր մի տոնէք:

Գ.— Հէ՛յ կիտի հէ՛յ, օր մը կը հասկնաս թէ իմ ըսածներս չիտակ են:

Խ.— Շիտակ բան մը չկայ որ հասկնամ. մեղք է ձեզի, ձեր անունը փարայի մը կ'ընէք: Ներողութիւն, գործի պիտի երթամ: Շնորհակալ եմ սուրճին համար. մնաք բարի:

Ա. ՓԱՊՈՒՃԵԱՆ

Նիւ Եորք

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Նիւ Եորքէն Պրն. Մեղիք Խաչօեանի եւ իրեններուն կողմէ զրկուած թողութիւններն ու նամակները ստացած ենք Մարտի 22-ի Զնգուլիներէ: Կուգանք ըսելու որ եսականութիւն քաջաբերելու ո՛չ սիրտ ունինք եւ ոչ ալ ժամանակ: Երկու խօսքով ըսենք որ մեր հայրենակցական խաղաղ կեանքը ալիկոծող Խաչօեաններու կեղծ դիտարկութիւնները չառ լաւ հասկցած ենք եւ մենք իրենց համար քուէներ չունինք: Քանզի տակաւին հետեւորդներ ըլլալու անարժանները՝ առաջնորդներ ըլլալու եւ Զնգուլի Վերաշինաց Միութեան մուկը մարդ Շիքակոյի սեւերեաները փրկելու կը ձգտին՝ որքան կը հասկնանք իրենց զրկութիւններէն: Ո՛չ, պարոններ, դուք վստահութիւն չէք ներշնչած մեզի եւ մեր մէջ ալ վստահելի գործեր ստանձնելու տեղ չունիք. երթաք բարի:

Մարտի 21

Պ. ՏԱՐՂՈՒՆԵԱՆ

ԲԱՑԱՌԻԿ ԺՈՂՈՎ ԿԵԴՐ. ՎԱՐՋՈՒԹԵԱՆ

Զնգուլի Վերջ. Միութեան Կեդր. Վարչութիւնը բացառիկ ժողով մը գումարեց Հոկտ. 4, 1931, Կիրակի օր ժամը 2ին, ներկայ էին Պրնք. Պ. Ստեփանեան, Կ. Թ. Թուխմանեան, Ս. Պապեան, Ա. Փապուճեան եւ Ա. Մինասեան իբրեւ խորհրդատու:

Այս ժողովին ներկայ էին նաեւ Լօրէնսի մէջ կազմուած Հաշտարար Յանձնախումբի երկու ներկայացուցիչները՝ Պրնք. Կարապետ Էօքսիւզեան եւ Ասլան Կէօքճաեան: Վերջիններուն նպատակն էր Շիքակոյի զատավարութիւնը հաշտարար կերպով կարգադրել Կեդր. Վարչութեան հետ:

Ժողովին ատենապետութիւն մասնաւոր պատճառով մը բացակայ ըլլալով փոխ ատենապետ Պրն. Ս. Պապեան վարեց ժողովը:

Նախ կարգադրուեցաւ Լօրէնսի հաշտարար մարմնոյն կողմէ զրկուած նամակը, ստորագրուած Պրնք. Աւետիս Էդմանեանի, Գասպար Եղմուրեանի, Ասլան Կէօքճաեանի եւ Կարապետ Էօքսիւզեանի կողմէ:

Հաշտարար մարմնոյն Հոկտ. 1ի գումարած ժողովին ի Լօրէնս, ներկայ եղած են հրաւերով Պրնք. Ճան Փապուճեան, Պալօ Զոնթօեան, Խաչատուր Պարսամեան եւ Սարգիս Յակոբեան:

Հաշտարար յանձնախումբը ներկայացուց Շիքակոյի հակառակորդ տարրին հետեւեալ պայմանները.—

1.— Ներկայ Կեդրոնին հրաժարումը եւ նոյնին փոխադրութիւնը Լօրէնս:

2.— Կեդրոնը պէտք է վճարէ իրենց բոլոր ծախքերը, որոնք կատարուած են զատավարութեան ընթացքին:

3.— 3000 տոլար պիտի յանձնուի հաշտարար մարմնոյն, եւ եթէ մինչեւ վեց ամիս կամ տարի մը այս դրամը չգործածուի Զնգուլիներու համար, պիտի յանձնուի նոյն վարչութեան, Շիքակոյ:

Կեդր. Վարչութիւնը նկատելով այս պայմաններու նուստացուցիչ ոգին, ինչպէս նաեւ ընկերութեան շահերը, հակառակ ըլլալը, որոշեց չընդունիլ զանոնք:

Հաշտարար յանձնախումբին վերոյիշեալ ներկայացուցիչները առաջարկեցին որ Կեդր. Վարչութիւնը Շիքակոյի զատավարութիւնը առ նուազն մէկ ամիս յետաձգելու որոշում տայ, որպէս զի իրենք ժամանակ ունենան պէտք եղած թղթակցութիւնները կատարելով աւելի զիւրաժանելի պայմաններ պատրաստել իբր հաշտութեան եղբ:

Կեդրոնը իր իրաւասութենէն դուրս նկատելով ապիսեւ մանաւանդ հակառակ՝ Պատգ. Ժողովի տուած որոշութիւններուն, մերժեց նաեւ մէկ ամսուան պայմանաժամը:

Կեդրոնական Վարչութիւնը կը դնահատէ Լօրէնսի մէջ կազմուած Հաշտարար Յանձնախումբին ցոյց տուած հարեւարական ոգին, որ որոշապէս յայտնի եղաւ սոյն ժողովի խորհրդակցութեանց ընթացքին:

Ի դիմաց Զնգուլի Վերջ. Միութեան Կեդր. Վարչութեան Լօրէնսի Հաշտարար Մարմնոյն՝

Ա. ՓԱՊՈՒՃԵԱՆ

Պ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Ա. ՄԻՆԱՍԵԱՆ

Ս. Յ. ՊԱՊՈՒՃԵԱՆ

Կ. Թ. ԹՈՒԽՄԱՆԵԱՆ

Ա. ԿԵՕՔՃԱԵԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԷՕՔՍԻՉԵԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յարգելի խմբ. «Ծօլառ»ի

Բարեկամ մը ինձ զրկած էր «Ծօլառ»ի բացառիկ ստացած պահուստ յուզումս եւ ուրախութիւնս անպատկեր եղաւ, պահ մը մոռցայ պանդխտութիւնս եւ ինքզինքս «Ծօլառ»ի բարձունքները կարծեցի, ուր մօտ քսան տարիներ առաջ ձեզմէ շատերուն հետ անոր կենսատու օղը ծծած էի:

Ձեր այս հայրենասիրական թեսթը՝ որով կը ջանաքաւորակ Զնգուլի տեղ նորը կերտել, ամէն զնահատուկ արժանի է, եւ վստահ եմ թէ զայն ընթերցող հայրենակիցները իրենց կարելին պիտի ընեն եւ պիտի գուրգուրան «Ծօլառ» թերթիկին վրայ, ինչպէս ես զայն իբր մասունք պահեմ եւ անոր միջոցաւ կարօտս կ'առնեմ ձեզի պէս հետոնները ցրուած պանդխտ հայրենակիցներէս:

Ի սրտէ կը դնահատեմ ձեզ, եւ շատ գոհ պիտի մնամ միշտ ստանամ զայն:

Յարգանք

Կ. Պալիս

Մ. Յ. Բ.

Պատ. Խմբագրութիւն «Ծօլառ»ի

Շիքակոյ

Այս տարի բաւական ծանր գործեր ունենալու չկողմանիջապէս զրել եւ ցաւով իմացայ, որ ոչ ոք դրած է, ուստի կը յուսամ ձեզ կը հետաքրքրէ հետեւեալ համառօտ ըլլալը:

Այս տարի Պէյրութի Ազգ. Սահակեան վարժարանէն ընդունեալ ընթացաւարտ եղաւ Պ. Մ. Թուխմանեան, որ զաւ տարի կը մտածէ տեղւոյս պետական Արուեստից վարժարան երթալ:

Նոյնպէս Հայ Աւետ. Մանչերու վարժարանէն ընթացաւարտ եղաւ Պ. Հրաչ Պողոս Պուճիգանեանը:

Պր. Հրաչ իր դասարանին բարձրագոյն չորս կարգերու եւ մասնաւոր նիւթի մը վրայ զրուած շարադրութեան եւ առաջնութիւն շահած ըլլալով՝ մրցանակներու արժանացաւ:

Պ. Հրաչ նիւթական անձուկ պայմաններու պատճառով ուղղակի գործի պիտի ընտանիքին:

ԲԱՐՆԵԱՆ

ԼՕՐԷՆՍԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԻ ԿԵԱՆՔԷՆ

Երբ Զեդուլի վերաչինաց Միութեան Տրդ. Պատգ. Ժողովը կը գումարուէր Յուլիս 4ին, Նիւ Եորքի մէջ, մասնաճիւղիս պատգամաւորը Ս. Յակոբեան, իրեն համախոհ մի քանի անդատասխանատու անհատներ հաւաքելով իր շուրջ լայնեցաւ ձախողեցնել այդ Ժողովը: Պատգ. Ժողովի ձախողումէն վերջ, Ս. Յակոբեան հպարտութեամբ վերադարձաւ քաղաքս ուրախութեան ժպիտը դէմքին: Ս. Յակոբեան նոյն յոխորտանքով տեղւոյս մէջ իր շուրջ հաւաքեց իրեն պէս մտածող մատի վրայ համրուող անձեր, որոնք միասնաբար աշխատեցան սուտ եւ խաբեբայական խօսքերով հայրենակիցներու մտքերը թունաւորել, որպէս զի մասնաճիւղը լուծելով՝ իրենց ետին յաղուրդ տան եւ քոչի տակ ծածկուած ստորին նպատակներ հետապնդեն:

Մեր բարի ծաղիկը եւ իր համախոհները շատ ու շատ ախտացան, ըրին ամէն բան, ստեղին, զրպարտեցին, չար խոսեցան Կեդր. Վարչութեան մասին եւ այս խօսքերով քրտնեղութիւն ստեղծեցին հայրենակիցներու մէջ, բայց եւ այնպէս չկրցան քանդել մասնաճիւղիս յօրաւոր կապը:

Իօրէնսի մասնաճիւղս նկատի ունենալով Ս. Յակոբեանի աշխատութեան արարքները, զինքը արտաքսեց մասնաճիւղէն, եւ այս պարագան ժամանակին հրատարակուեցաւ մամուլին մէջ: Միւլթեան թշնամիներուն դէմ մասնաճիւղս շարունակեց իր ազդու գործունէութիւնը, կեցաւ Կեդրոնի կողքին եւ ի դերեւ հանեց չարամիտներու դաւադրական գործերը:

Ուրախ ենք ըսելու որ վերջերս կազմուած հաշտարար
ժամինը հաղորդակցելէ յետոյ Կեդր. Վարչութեան հետ,
իր հրաւերով գումարուած բացատրական ժողովին մէջ ը-
սաւ իր վերջին խօսքը, ջատագովեց Կեդրոնին դործունէու-
թիւնը եւ խտրիւ դատապարտեց Ս. Յակոբեանի եւ իրեն-
ներուն քանդիչ եւ կեղծարար գերրը:

Այս գեղեցիկ գործունէութեան վերջ, հաշտարար մար-
մինը մասնաճիւղիս միացաւ, եւ կոչ բրաւ որ ամէն հայրե-
նակից միանայ եւ ոյժ տայ այս Միութեան, որպէս զի ան
կարողանայ մեր փափաքը եւ նպատակը իրականացնել: Այ-
սօր ուրախութեամբ կուզանք ըսելու որ մասնաճիւղիս թիւը
աւելցած է եւ գործունէութեան թափը կրկնապատկուած:
Պիտի աշխատինք եւ գործենք Կեդր. Վարչութեան կողքին,
մինչեւ որ մեր որդեգրած նպատակը իրականացած տեսնենք:

Ի դիմաց ջնգուշի վերաշինաց Միութեան

ԼՕրէնսի Մասնաճիւղի Վարչութեան
Ատենապետ՝ ՅՈՎՀ. Յ. ԺԱՊՈՒՃԵԱՆ
Ատենադպիր՝ ԽԱԶԻԿ Պ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ
(Կնիք)


ԶՆԳՈՒՇՑԻՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

ՄԱՐՍԷՅԷ. — Հայրենակից Պր. Մ. Մխչիկան երկու
ամիս հիւանդ տունը մնալէ յետոյ, այժմ ապաքինած է ու
կը պարտալի իր գործով :

*** Օր. Եղիաբարեթ Թուրմանեան Պէյրուիէն քաղաքս
 Ժամանեց եւ չորս օր մնալով մեկնեցաւ Հարաւային Սմե-
 րիկա իր մօր մօտ :

* * * Մարիամ Հաճի Ղաղարեան իր փոքրիկը սեւ հո-
ղին յանձնեց : Մեր սրտառլին ցաւակցութիւնը կը յայտնենք
ու Տիրոջ մխիթարութիւնը կը հայցենք :

Հայրենակից Պր. Յովհ. Թէլոսեան Նիսէն քաղաքս
 Ժամանեց մի քանի օրուան համար ու Հրկին վերադարձաւ
 Նիս:



ՀԱՅԿԱԿ ՏԱՂՏԻԿԵԱՆ

Պրն. Հայկակ Տաղտիկեան որդին է Տէր եւ Տիկ. Ա. Տաղտիկեանի. ծնած է Լօրէնս, Մէս., 1910ին, ծնողաց հետ փոխադրուած է Քալիֆօրնիա. լրացուցած է Սանկրի հայ սքուլը: Այժմ կը յաճախէ Պրքլի համալսարան եւ կը հետեւի էլեքտրադիտութեան ճիւղին: Իր ուսուցիչները մեծ գովեստով կը խօսին իր մասին:

* * * Մեր ծերունի Հայրենակիցը Գաղատայեան Պոլսէն Մարտէջ Ժամանեց . ա՛ն պիտի ըլլայ մեր անցեալ յիշատակները յիշեցնող Հայրիկը : Բարի դալուստ կը մաղթենք իրեն :

*** Մեր փոքրիկը Պարսամ հիւանդանոց փոխադրուելով գործողութեան ենթարկուեցաւ, այժմ լաւացած տուն փոխադրած ենք: Մեր շնորհակալութիւնները բոլոր անոնց որ այս առթիւ մեզի քաջայեւ եղան:

ՊԵՏ . ՏԱՐԶՈՒՆԵԱՆ

ՅՐԷՉՆՑ.— Սէլմայէն Տիկ. Մ. Կ. Յակոբեան Սաք-
րամանթօ դնադ իր եղբորը՝ Ն. Տաղտիկեանի ալիեյութեան :

* * * Օգբնաոր հայրենակրիցներն Տիարք եւ Տիւնայք Գ. Գրիգորեան, փեսա Մ. Երեմեան, Հայկակ Տաղտրիկեան, Մ. Պոյաճեան եւ զորանչր ալցելիցին Ֆրէշնօ եւ հիւրառիր-րուեցան իրենց բոլոր ծանօթներէն ու բարեկամներէն, եւ կրկինք վերադարձան իրենց տեղր:

* * * Լօս Անճէլըսէն Տէր եւ Տիկ. Գ. Յովսէփեան եւ Յ. Մաթոսեան այցելեցին Սէլմա ու Տաշուպա եւ հիւրասիրուեցան ըստ հարկաւորութեան, ու կրկին վերադարձան տեղերնին:

* * * Լիվինկաթընէն այցելեց Պ. Մ. Մանուկեան եւ
հիւրասիրուեցաւ ի. Ս. Սրբմեանէ ու կրկին վերադարձաւ
իր տեղը :

* * * Տէր եւ Տիկին Զաւօ Սրբութեան աղջիկ դաւակով մը
բախտաւորուեցան : Մեր խնդակցութիւնը կը յայտնենք :

* * * Ինքնաշարժի ցաւալի տրկածով մը վիրաւորուեցան մեր տարէց Հայրենակից Ե. Տալալիկեան եւ Գ. Տալալիկեան, ուրախ ենք ըսելու որ այժմ լաւացած ու առողջ են :

* * * Խաչի օրը, իր անուան տօնը տօնեց Պր. Խ. Ս. Սըրբմեան, իր մօտիկ բարեկամներու հերկայութեամբ: Այս առթիւ Պր. Խ. Ս. Սըրբմեան Ծովառն հուրիւն 5 տոլար:

* * * Նոյ. 1-ին տեղի ունեցաւ նշանախօսութիւնը Օր. Ն. Փայուճեանի ընդ Պր. Լեւոն Կրպաճեանի (Տիգրանակերտցի), ներկայութեամբ երկու կողմերու ազգականներու եւ բարեկամներու: Նշանի արարողութիւնը կատարեց Ֆառլըրի հովիւ Պատ. Սանդիկեան: Տեսնուած էր ճոխ պատրաստութիւն: Կեճայեան նուագախումբը լաւ փայլ մը տուաւ իր նուագով: Պատուելին գովեց օրիորդին լաւ յատկութիւններն ու նաեւ վեր հանեց աղուն բարեմասնութիւնները: Ներկաներ զոհ տալաւորութեամբ մեկնեցան ուշ տան:

* * * Սան Ֆրանչիսքոյի հայրենակիցներէն յայտնի երգիչ Ճան Գօնտօեան, Նոյ. 1-ին երգահանդէս մը տուաւ, կարգադրութեամբ Պր. Փօլ Փօլի: Երգահանդէսին կը մասնակցէր քաղաքի ծանօթ ջութակահար Պր. Արամ Զաքարեան: Պր. Գօնտօեանի յայտադրը կը բաղկանար 14 կտոր երգերէ, իտալերէն, Ֆրանսերէն, անգլիերէն եւ հայերէն: Երգեց շատ յաջողութեամբ, արժանացաւ ծաղիկփունջերու եւ բուռն ծափահարութեան: Այս առթիւ, Պր. Գօնտօեան իր շնորհակալութիւնը կը յայտնէ Պր. Փօլ Փօլի որ իր ջանքերը չէր խնայած ձեռնարկին մէջ: Ճան Գօնտօեան, որ ՍանՖրանչիսքոյի օրերայի երգիչներէն մին է, նոյն օրը կրկին մեկնեցաւ իր գործին:

Կ. Ս. ՍՐԸՄԵԱՆ

ՇԻՔԱԿՕ. — Պր. Կ. Գալիսեան վերաբուժական յաջող գործողութեան մը ենթարկուեցաւ, այժմ լաւացած իր առօրեայ գործով կը զբաղի: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

* * * Տէր եւ Տիկ. Յ. Ա. Աղբէթեան աղջիկ զաւակով մը բախտաւորուեցան, մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

* * * Հայրենակից Պր. Գ. Տաղաթեան անցեալ տարի Գալիֆօրնիայ Պրքերի համալսարանէն ընթացաւարտ եղաւ եւ այս տարի Շիքաքօ Համալսարանին մէջ հաշուակալութեան ուսուցչութեան պաշտօնին կանչուած է: Պր. Տաղաթեան այժմ Շիքաքօ է եւ կը յաճախէ բոլոր հայրենակիցներուն: Ծովառի վարչութիւնը կը շնորհաւորէ մեր տաղանդաւոր հայրենակիցը:

* * * Պր. Իսրայէլեան Գալիֆօրնիայէն քաղաքս ժամանեց, բարի զարուստ վը մաղթենք:

* * * Ծովառի վարչութիւնը այս տարի եւս պիտի տօնէ Ծովառի վեցերորդ տարեմուտը:

ԼՐԱՏՈՒ

ՀԱԼԷՊ. — Մեր տարեց հայրենակից Մ. Յովհ. Ագարեան օր աւուր աշխատանքով կ'ապրէր, այժմ բաւական անձուկ վիճակ մը տունի, ծանրաբեռնուած է 7 փոքրիկներով, օրուան շահածը չոր հացի մըն ալ չի բաւեր, կ'արժէ որ այս զժբախտին օգնութեան ձեռք մը կարկառուի:

* * * Օգոստոս 2-ին, Օր. Վեթերիա Կօչկարեանի ընդ Պր. Յովհ. Տ. Օհաննիսեանի սրակի արարողութիւնը կատարուեցաւ Երիտասարդաց ակումբին մէջ: Սրահը լեցուած էր երկու կողմի բարեկամներով: Ուրախութիւնը տեւեց մինչեւ առաւօտ: Ներկաներ զոհ տալաւորութեամբ մեկնեցան:

* * * Օգոստ. 2-ին, Պր. Յակոբ Թիւրոյեանի (Մարսէլէն) նշանախօսութիւնը տեղի ունեցաւ հոս Հալէպի մէջ ընդ Օր. Լուս. Գասարեանի (Տիգրանակերտցի), մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

* * * Յուլիս 20-ին տեղի ունեցաւ Հռիփսիմէ իմաշատուրեանի ընդ Պր. Լեւոն Թովհեանի (Զմշկածագցի) պոսակի



ՅԱԿՈԲ Գ. ՄԱՁՈՒԼԵԱՆ (Զնհ 1915-ին)
Խ. ԱՐՁՈՒՆԵԱՆ (այժմ Լօրէնս)

արարողութիւնը Արամեան վարժարանին մէջ: Երկուստե՛հրաւիրեալներ պարեցին եւ զուարճացան: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

* * * Ծերունի Նիկողոս Գասապեան հիւանդ եւ մահա՛մերձ վիճակի մէջ իր վերջին օրերը կ'ապրէ: Տէրը կարողութիւն տայ որ կարենայ տոկալ:

* * * Այս առիթը ստորադրողը եւ իր տիկինը աղջկա՛ւակով մը լախտաւորուեցան:

Մ. ՓՈՒՍՈՒԼԵԱՆ

Հալէպ

ՏԽՐՈՒՆԻ

Դեկտ. 3-ին տեղույս Աղգային հիւանդանոցին մէջ յա՛կարծամահ եղաւ Պրն. Պօղոս Ռաչօեան: Ողբացեալը Դեկտ. 2-ի առաւօտուն գործով ասկէ Լիւն կ'երթայ, մինչեւ կէսօր իր գործերը կը տեսնէ եւ ժամը 2-ին չոգեկառք կը նստի վրան վերադառնալու համար. չոգեկառքին մէջ սաստիկ լինելով մը կ'ունենայ ստամոքսին մէջ, անմիջապէս բժշկական բժշկանքի կը յանձնուի, օր մը տուել խնամուելէն յետոյ լանդանոց կը փոխադրուի գործողութեան համար, աւելցնելով սակայն որ կ'ունանայ գործողութիւնը եւ սրտին քով վէրք պայթելով կը մահացնէ տարաբախտը: Կառավարութիւնը կը կասկածի որ թունաւորուած է, սրով դիագնոստիկ կատարէ եւ կ'ստուգէ որ վէրքի պայթումին հետեւանք թունաւորուած էր հէք Ռաչօեանը:

Թաղման տխուր արարողութիւնը կատարուեցաւ Դեկտ. 6, առաւօտեան ժամը 8ին, հակառակ որ ժամանակ չէր մընացած մահապաշտօնականները, դարձեալ բազմաթիւ բարեկամներ եւ ընկերներ մասնակցեցան յուղարկւորական թափօրին: Գեղեցիկ դամբանական մը խօսեցաւ Տէր Պսակ քահանայ եւ վեր հանեց հանգուցեալին աղագային գործունէութիւնը:

Պրն. Ռաչօեան ծնած էր Չնդուշ, 1891ին, 1912ին Ամերիկա մեկնած է, ուր մնացած է մինչեւ կամաւորական շարժումը, որու սակայն չէ կրցած մասնակցել բժշկական քննութեան արգելումով: 1919ին կը մեկնի Ամերիկայէն երկիր երթալու ջերմ փափաքով, սակայն չի յաջողիր, 1926ին կը հաստատուի Ֆրանսա: Անդամ էր Ռամկ. Ազատ. կուսակցութեան:

Հանդիստ իր ոսկորներուն եւ մխիթարութիւն իր բոլոր պարադաներուն:

ՍԳԱՒՈՐ

Վալան, Դեկտ. 20, 1931

ԼՕՐԵՆՍ.— Չնդուշի Վերաչինութեան Լօրէնսի մասնաճիւղը իր խնդակցութիւնը կը յայտնէ Պրն. Մարտիրոս Մ. Մանուկեանի իր ամուսնութեան առթիւ եւ կը մաղթէ երջանիկ կեանք նորապսակ ամուլին:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ



Ձախէն աջ (նստած).— Հայկունի Անարոյեան, Արաւստի Անարոյեան կանգնած՝ Յակոբ Ակինեան:

ԿԱՐՕՏԻ ՆԱՄԱԿ

Սիրելի Պետրոս,

Անցեալ տարի դրած դիրիզ (նամակ) պատասխանը գրեցի. ընկից վերջը գրած գիրերիդ ալ առած եմ, բայց գրել չի գիտնալուս համար չի կարցայ պատասխանել:

Երէկ Ծովառցին քովիս եկաւ, ըսի իրեն թէ Պետրոսէն գիր իմ առեր, հըլա կարգայ նայիմ ի՞նչ է գրեր:

Նամակդ իրեն տուի կարդաց: Նորէն հին օրերը յիշած էիր, իմ ձեր տունը դալուս հըմար (համար) գրեր էիր, աչքիս լեցաւ, ես ալ յիշեցի ըդ օրը:

Հէջ միտքէս չի ելլար երբոր իրար տեսանք եւ պաղտուանք: Շատ երկար զրուցեցինք, շատ բան ըսի քեզի, շատ բաներ ալ ծածկեցի քեզմէ քու սիրտդ ալ չի ցաւցնելու հըմար:

Դեռ ձեզի դալէ առաջ շատ շատերու տունը գացի, չի տակը բոլորն ալ սիրով դուռերնին բացին, բայց գտնուան ոմանք որ դուռը չի բացին. ընկէ վերջ քանի մը հեղ եւս գացի. ախր մար (մայր) էի, սիրտիս չի դիմացաւ, նոյն բանը բրին ու ալ չի գացի, է՛հ անշուշտ օր մի սիրտերնին կ'արթըննայ ու դարձի կուգան:

Հա՛, սա ալ ըսիմ որ այս անգամ շատ մը պատկերներ առի, շատերը վարժատուն գացեր են, բան սորվեր են: Վա՛խ ֆիտանի պէս դաւակներս, հիշ մէկը չեմ ճանչնար, թէ եւ բոլորին ալ պապը մարը կը ճանչնամ: Տէրը բարեյշատակ ընէ զիրենք, հայր Արաւստի օրհնէնքը վրանին իջնայ: Հըպա խմբով պզտիկ ուլերիս, բոլիկ (այդ) ի՞նչ աղտէկ շաղաներ էին, պօյերնին սիրիմ, երանի թէ հոս ըլլէին իրենց ֆրիկ կուտայի որ ուտէին. այդ ալ իմ բախտէս է որ քովիս չեն, է՛հ սաղ թող միան թող հեռու ըլլան: Նաեւ կի խընդրեմ քնէ որ բոլորին ալ ըսես որ պատկերնին օղըրկեն իրենց նայիմ ու կարօտիս առնեմ:

Բէօսայենց Հոփիսիմէն ալ նամակ մի գրած էր: Ապրիս խանըմ խաթուն աղջինիս: Դիտե՞ս ինչ է գրեր Պետրոս, գրեր է որ բոլոր կնիկներուն ալ գրած եմ որ մէկտեղուին համ խեղճերուն օգնելու եւ համ ալ Նոր Չնդուշը շինելու հըմար: Կը տեսնա՞ս Պետրոս, Հոփիսիմէն Ամերիկա ծնած է, ոչ զիս տեսեր է ոչ ալ Չնդուշը գիտէ, բայց կ'ուզէ որ իմ ցաւիս թեթեւցնէ Նոր Չնդուշը շինելով: Հըպա դո՞ւք Չնդուշ ծընածներդ որ գալաներուս շուքին տակ պառկած էք, ֆրիկներս կերած էք եւ սարսիկաններովս տաքցած էք, դուք ի՞նչ պէտք է ընէք:

Դուք շատ աւելի պէտք է աշխատիք ետիրուս, իմ ցաւս թեթեւցնելու հըմար: Իմ աւերակներուն մոխր չալտի գաղբի մինչեւ որ նորը չչինէք: Իսկ եթէ դուք չի չինէք, խանըմ հարսերիս եւ աղջիկներիս պիտի չինեն, այն տունն ամօթ պիտի ըլլայ ձեզի՝ էրիկմարդիկներուդ հըմար:

Երբ Ծովառցին գիրդ կարդաց լմնցաւ, ըսի, գուրպան հըրա սա գիրն ալ տես թէ ո՞րմէ է: Զարֆը ձեռքէս առաւ կարդաց եւ ըսաւ որ Տիրոյ Մամային տղին Սարգիսէն է: Օղուլ աչքիս քօրնայ ըսի, կարգամ նայիմ ինչ է գրեր, սաւառնին ալանջը խլանայ շատոնց է գիր չեմ առեր իրենէ:

Շիտակը շատ ուրախացայ, բայց երբ կարդաց թմաւ լմնցաւ) մէկ հեղ թեւաթափ եղայ. գրեր էր թէ նամակ չիմ կարնար գրեր երկար գործելուս հըմար: Է՛հ, հըպա ի՞նչ ըսեմ Պետրոսիս, դաիր (անշուշտ) ան ալ կի գործէ, բայց տես ամէն տունն ալ գիրերիս կը գրէ առանց ձան հանելու եւ սիրով: Տէրը իր մէկ հատիկը պահէ եւ տղայ մի տայ որ ճրագը վառած մնայ:

Ըսէ Սարգիսին թէ Կիրակի օրը ժամանակ չունի՞: Եթէ քեզի ըսէ որ ժամ կ'երթամ, ըսէ որ մօր մը գրուած նամակը Աստուծոյ քով աղօթքի չափ ընդունակ է:

Մէկ ալ ըսեմ թէ ասկէ վերջ երեք ամիսը հեղ մը գիր պիտի գրեմ: Է՛հ, ի՛նչ ընեմ, դպրոցականներս շատ դործ ունին, ամէն ատեն ալ Պետրոսին նեղութիւն տալ չեմ ուզեր. նորէն նազիս իրեն կ'անցնի եւ ինք պիտի գրէ: Զի խորհիս թէ զինք կը գովեմ, թէ եւ գովուելու շատ տեղ ունի, բայց զիտեմ որ ըտանկ բաներ չի սիրեր: Հըպա թուղթին եւ մուրաֆային նեղութիւնը... Տէրը Գալիֆօրնիայի տղոցս պէտք օրհնէ, ամէն ատեն թուղթին գրամը կ'օլորկեն, Լօրէնսի հայրենակիցներն ալ գրկած էին, Աստուած բոլորին ալ գործը յաջողէ:

Զի խորհիս թէ Նիւ Եորքի հայրենակիցները մոռցած իմ, անոնցմէ ալ գրամ առի, բայց քեզ խաբեմ Աստուած չեմ կրնար խաբեր, ակնկալածիս չափ չէր: Անդրիասը անգամ մը գրած էր որ հանք կը փնտռենք, կ'երեւի թէ չի գտան, բայց թող չի յուսահատին, թող աշխատին եւ պիտի գտնեն. երբ գտնեն թող չի մոռնան դիս, մանաւանդ Նոր Զեղուչը:

Այս ըսելով չի խորհիս թէ եթէ գրամ չի գրկեն նամակ չպիտի գրեմ, ոսկորս գալամ եւ արինիս ալ միւրաֆայ կ'ընեմ նորէն կը գրեմ, մինչեւ որ Նոր Զեղուչը չ'ինէք. անկէ վերջ ինչ կ'ուզէք ան ըրէք: Եթէ Կալիօ Պաղտօն ալ նեղուի ուշ գրելուս՝ ըսէ թէ տան հացի չափ պիտի ըլլայ որ շուտ չի թմի:

Անցեալ անգամ նալքուգ գրկած էի, այս անգամ ալ Ատիչի ձորերէն մանիշակ կը գրկեմ, չի մառնամ ըսելու որ այս նամակն ալ Ծօվառցիին գրել տուի: Բարեւ ունի բոլորիդ:

Միշտ քուկդ

Ծ Օ Վ Ա Ռ



Ե. Աշտարակեցի եւ Մ. Յատկալորեան
Սոյ շրջանը եղած ժամանակ 1918-20

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐՄ ԱՊՐԱՆՔՆԵՐ

Մենք անձամբ կը պատրաստենք մեր խանութին մէջ ընկողով եւ խաղողով շինուած ոսնիկ, պաստեղ համով եւ հոտով. դիւր չափաւոր: Դայտարի պաստրմա եւ Չոր միս, ձիթապտուղ, (դէյթուն) եւ թուռչի:

Հանդէսի եւ խնճոյքի համար մասնաւոր զեղչ:
Մանգարար եւ թարմ ապրանքի համար դիմեցէ՛ք:

Ա. ԹՈՒՐՈՅԵԱՆԻ

824 27րդ Փողոց, Հըտսըն Պուլըվարտի մօտ
Եւսիքըն Սիթի, Ն. Ճ.

